

ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Բարևներ 1:1-2	Ողջույնի խոսք 1:1 1:2ա 1:2բ	Բարևներ 1:1 1:2ա 1:2բ	Բարևներ 1:1 1:2ա 1:2բ	Ուղղերձ 1:1-2
Պողոսը գոհանում է Աստուծոց կողմնասացիների համար	Քրիստոսի վրանրանց հավատքը	Գոհություն և բարեխոսություն	Գոհության աղոթք	Գոհություն և աղոթք
1:3-8	1:3-8	1:3-8	1:3-8	1:3-8
Քրիստոսի անձը և գործը	Քրիստոսի գերակայությունը		1:9-14	
1:9-20	1:9-18	1:9-14	Քրիստոսի անձը և գործը	1:9-12 1:13-14
	Քրիստոսով հաշտված	1:15-20	1:15-20	Քրիստոսը ամբողջ Արարչագործության Գլուխն է
	1:19-23			Կողոսացիներն ունեն իրենց բաժինը Փրկության մեջ
1:21-23		1:21-23	1:21-23	1:21-23
Պողոսի ծառայությունը եկեղեցուն	Քրիստոսի գոհի ծառայությունը	Պողոսի հետաքրքրված է կողոսացիներով	Պողոսի գործը որպես եկեղեցու ծառայող (1:24-2:5)	Պողոսի գործերը հեթանոսներին ծառայելու մեջ
1:24-2:5	1:24-29	1:24-2:5	1:24-2:3	1:24-29

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՅԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն

3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՎՅԻՆԵՐԻ 1:1-2

¹Պողոսը՝ Աստծո կամքով Հիսուս Քրիստոսի առաքյալը, և Տիմոթեոս եղբայրը. ²Կողոսիայում ապրող սրբերին և հավատացյալ եղբայրներին Քրիստոսով. շնորհ և խաղաղություն ձեզ Հայր Աստծուց և Տեր Հիսուս Քրիստոսից:

1:1 «Պողոսը» Տարսուցի Սողոսն առաջին անգամ Պողոս է անվանվում Գործք 13:9-ում: Հավանական է, որ հրեաներից շատերը, որոնք ապրում էին «սփյուռքում» (Պաղեստինից դուրս ապրող հրեաները), ունեին եբրայերեն և հունարեն անուններ: Եթե այդպես է, ապա Սողոսի ծնողներն էին տվել նրան այս անունը, սակայն ինչու է ապա «Պողոս» անունը հանկարծակի հայտնվում Գործք 13-ում: Հավանաբար՝

1. ուրիշները սկսեցին դիմել նրան այս անունով
2. նա՝ սկսեց իրեն կոչել «փոքրիկ» կամ «ամենավերջինը» տերմինով

Հունարեն *Paulos* անունը նշանակում էր «փոքրիկ»: Մի քանի տեսություններ են առաջադրվել այս հունարեն անվան ծագման վերաբերյալ:

1. Երկրորդ դարի ավանդույթի համաձայն Պողոսի կարճահասակ, գեր, ճաղատ, ծուռոտ, թավ հանքերով արտաքինը, և դուրս պրծած աչքերը հավանաբար եղել են նրա անվան աղբյուրը, որը ծագել է Թեսաղոնիկեցից մի ոչ կանոնական գրքից, որը կոչվում է *Պողոսը և Թեկլան (Paul and Thekla)*:
2. սուրբգրային հասվածները, որտեղ Պողոսը իրեն անվանում է «սուրբերից ամենավերջինը», քանի որ նա հավածել էր Եկեղեցին ինչպես Գործք 9:1-2-ում (տես՝ 1 Կորնթ. 15:9; Եփես. 15:9; Եփես. 3:8; 1 Տիմ. 1:15)

Ոմանք տեսել են նրա «փոքրությունը» որպես ինքնակոչ տիտղոսի ծագման աղբյուր: Սակայն Գաղատացիներին ուղղված նամակի պես գրքում, որտեղ նա շեշտադրում է իր անկախությունը և հավասարությունը Երուսաղեմի Տասներկուսի հետ, սա ինչ-որ տեղ անհավանական է (տես՝ 2 Կորնթ. 11:5; 12:11; 15:10):

❖ **«առաքյալ»** Սա ծագել է հունարեն «ուղարկել» (*apostello*) բառից: Հիսուսը ընտրեց տասներկու տղամարդու, որ լինեն Իր հետ հատուկ նպատակով և անվանեց նրանց «Առաքյալներ» (տես՝ Ղուկ. 6:13): Այս տերմինը հաճախ կիրառվում էր Հիսուսի վերաբերյալ, որն ուղարկվել էր Հորից (տես՝ Մատթ. 10:40; 15:24, Մարկ. 9:37, Ղուկ. 9:48, Հովհ. 4:34, 5:24, 30, 36, 37, 38, 6:29, 38, 39. 40, 57, 7:29, 8:42, 10:36, 11:42, 17:3, 8, 18, 21, 23, 25, 20:21): Հրեական աղբյուրներում առաքյալը մեկ ուրիշին ներկայացնելու համար ուղարկված մարդն է, ինչպես «ղեսպանը» (տես՝ 2 Կորնթ. 5:20):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒՂԱՐԿԵԼ (APOSTELLO)

SPECIAL TOPIC: SEND (APOSTELLO)

Սա հասարակ հունարեն «ուղարկել» (այսինքն՝ *apostellō*) բառն է: Այս տեմինն ունի աստվածաբանական մի քանի կիրառություն՝

1. Դասական հունարենում, ինչպես նաև ռաբբիններն այն կիրառում էին այն մարդու համար, որը կանչված և ուղարկված է որպես մեկ ուրիշի պաշտոնական ներկայացուցիչը, մեր «ղեսպան» բառի պես մի քան (տես՝ 2 Կորնթ. 5:20):
2. Ավետարանները հաճախ այս ԲԱՅԸ օգտագործում են Հիսուսի համար, որպես Հորից ուղարկված: Հովհաննես Ավետարանում այս տերմինը մեսիական երանգ է ստանում (տես՝ Մատթ. 10:40, 15:24, Մարկ. 9:37, Ղուկ. 9:48 և հատկապես Հովհ. 5:36, 38, 6:29, 57, 7:29, 8:42, 10:36, 11:42, 17:3, 8, 18, 21, 23, 25, 20:21 [թե՛ «առաքյալ» բառը և թե՛ դրա հոմանիշը՝ *pempō* կիրառվում են հ.

21-ում))։ Այն կիրառվում է Հիսուսի կողմից հավատացյալներին ուղարկելու համար (տես՝ Հովի. 17:18, 20:21)։

3. ՆԿ-ը կիրառում է այս տերմինը աշակերտների համար՝
 - ա. աշակերտների ներքին օղակի առաջին տասներկու առաքյալները (օր.՝ Մարկ.6:30, Դուկ. 6:13, Գործք 1:2,26)
 - բ. Առաքյալներին օգնող մարդկանց հատուկ խումբ կամ ծառայակիցներ՝
 - (1) Բառնարասը (տես՝ Գործք 14:4,14)
 - (2) Անդրոնիկոսը և Հունիան (տես՝ Հռոմ.16:7)
 - (3) Ապոլոսը (տես՝ 1 Կորնթ.4:6-9)
 - (4) Հակոբոսը՝ Հիսուսի կես եղբայրը (տես՝ Գաղ.1:19)
 - (5) Սիվիլանոսը և Տիմոթեոսը (տես՝ 1 Թեսաղ.2:6)
 - (6) հավանական է Տիտոսը (տես՝ 2 Կորնթ.8:23)
 - (7) հավանական է Եպափրոդիտոսը (տես՝ Փիլ.2:25)
 - գ. եկեղեցում հարատևող շարունակվող պարզև (տես՝ 1 Կորնթ.12:28-29, Եփես.4:11)
4. Պողոսն այս տերմինը կիրառում է իր նամակներից շատերում իր համար, որպես իրեն Աստծուց տրված Քրիստոսի ներկայացուցիչը լինելու իշխանության հաստատման կերպ (տես՝ Հռոմ.1:1, 1 Կորնթ.1:1, 2 Կորնթ.1:1, Գաղ.1:1, Եփես.1:1, Կող.1:1, 1 Տիմ.1:1, 2 Տիմ.1:1, Տիտոս 1:1)։
5. Որպես ժամանակակից հավատացյալներ, խնդիրը որի հետ բախվում ենք այն է, որ ՆԿ-ը երբեք չի սահմանում, թե ինչ է իր մեջ բովանդակում այս շարունակական պարզև կամ ինչպես կարող ենք դա ճանաչել հավատացյալների մեջ։ Ըստ երևույթին կարելի է զանազանել սկզբնական Տասներուսի (#3) և հետագա կիրառությունների (#3բ) միջև։ Տես ՀԱՏՈՒՄ ԹԵՄԱ. ՆԵՐՇՆ-ՉԱՆՔ և ՀԱՏՈՒՄ ԹԵՄԱ. ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ։ Եթե ժամանակակից «առաքյալները» ներշնչված չեն գրելու ավելի շատ Սուրբ Գիրք (այսինքն՝ կանոնը փակված է, տես՝ Հուդա հ. 3, տես՝ ՀԱՏՈՒՄ ԹԵՄԱ. ԿԱՆՈՆ), ապա այն ինչ նրանք են անում տարբերվում է ՆԿ-յան մարգարեներից կամ ավետարանիչներից (տես՝ Եփես.4:11)։ Ին մերկայացրած հավանականությունները հետևյալն են՝
 - ա. չավետարանված վայրերում միսիոներական եկեղեցիներ սկսողները (ինչպես կիրառվում է *Դիդակախոսում*)
 - բ. հովիվների ավագներ տվյալ տարածաշրջանում կամ հարանվանության մեջ
 - գ. ոչ որ չգիտի

❖ «Քրիստոս» Սա երբայերեն «*մեսսիահ*» տերմինի հունարեն համարժեքն է, որը նշանակում է «օծյալ»։ Այն վերաբերում է «մեկին, որը հատուկ առաջադրանքի համար Աստծո կողմից կանչված և սպառազինված է»։ ՀԿ-ում առաջնորդների երեք խմբեր էին օծված՝ քահանաները, թագավորները և մարգարեները։ Հիսուսը կատարեց այս բոլոր երեք օծյալ պաշտոնները (տես՝ Եբր. 1:2-3)։

ՀԱՏՈՒՄ ԹԵՄԱ. ՄԵՍԻԱ **SPECIAL TOPIC: MESSIAH**

Ա. Հին Կտակարանյան կիրառությունը

Այս տերմինի հետ կապված մեկնության դժվարությունը կայանում է նրանում, որ «Մեսիա» կամ «օծյալ» բառին համազոր տարբեր կիրառություններ կան (BDB 603, KB 645)։ Այս տերմինը կիրառվում էր անձին հատուկ յուրով օծելիս, որպես նշան Աստծո կանչին և նախատեսված առաջնորդական գործի համար պատրաստելիս։

1. կիրառվում էր հրեա թագավորների համար (օրինակ՝ 1 Թագ. 2:10, 12:3, 24:6,10, 2 Թագ. 19:21, 23:1, Սաղմ. 89:51, 132:10,17, Ողբ. 4:20, Ամբ. 3:13, «Օծյալ Իշխան» Դան. 9:25-ում)։
2. կիրառվում էր հրեա քահանաների համար (այսինքն՝ «օծյալ քահանաներ», Ելից 29:7, օրինակ՝ Ղևտ. 4:3,5,16, 6:15, 7:36, 8:12, հավանաբար Սաղմ. 84:9-10 և 133:2)
3. կիրառվում էր Նահապետների և մարգարեների համար (տես՝ Ծննդ. 20:7, 1 Մնաց. 16:22, Սաղմ. 105:15, որը վերաբերում է ուխտի հավաքական ժողովրդին. հավանաբար Ամբ. 3:13)

4. կիրառվում էր մարգարենների համար (տես՝ 3 Թագ. 19:16, հավանաբար՝ 1 Մնաց. 29:22 և Եսայի 61:1)
5. կիրառվել է Կյուրոս II-ի համար (այսինքն՝ մի հեթանոս արքայի, տես՝ Եսայի 45:1)
6. #1 և #2 միասին Սաղմոս 110 և Չաքարիա 4-ում
7. կիրառվում է Աստծո կողմից հատուկ ուղարկված՝ Դավթի սերնդի Թագավորի համար, որը բերելու է արդարության նոր դարաշրջան (այսինքն՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:22-36)
 - ա. Հուդայի ցեղից (տես՝ Ծննդ. 49:10)
 - բ. Հեսսեի տնից (տես՝ 2 Թագ. 7)
 - գ. տիեզերական իշխանություն (տես՝ Սաղմ. 2, Ես. 9:6, 11:1-5, Միք. 5:1-4բ, Ամբ. 3:13)
 - դ. կարիքավորներին ծառայություն (տես՝ Ես. 61:1-3)
8. կիրառվել է Սաղմոսներում
Մեսիային վերաբերող շատ ակնարկներ արձանագրված են Արքայական Սաղմոսներում (այսինքն՝ Սաղմոս 2, 18, 20, 21, 45, 72, 89, 101, 110, 132, 144): Համատեքստում դրանք վերաբերում են Դավթի սերնդից օծյալ Թագավորին, բայց քանի որ կանխատեսումները երբեք չեն իրականացել Իսրայելի պատմության մեջ, շատ մեկնաբաններ պնդում են, որ դա վերաբերում է վերջին ժամանակներին:

Բ. Նոր Կտակարանյան կիրառությունը

Անձամբ ես համամիտ եմ այն մտքին, որ «օծյալը» Նագովրեցի Հիսուսն է (տես՝ Հովհ. 1:41, 4:25), քանի որ՝

1. Դանիել 2-ում ներկայացվում է հավիտենական Թագավորություն՝ չորրորդ կայսրության ընթացքում (այսինքն՝ Հռոմեականը)
2. Դան. 7:13-ում ներկայացվում է «մարդու որդու», որին տրվում է հավիտենական թագավորություն
3. Դանիել 9:24-ի փրկագործությանը վերաբերող ենթանախադասությունները, որոնք մատնացույց են անում ընկած աշխարհի պատմության կուլմինացիային՝ վերջաբանին
4. Հիսուսը կիրառում է Դանիելի գիրքը ՆԿ-ում (տես՝ Մատթ. 24:15, Մարկ. 13:14):

Պետք է ընդունել, որ սա հազվադեպ տիտղոս է ՀԿ-ում, հավանաբար միայն Դան. 9:25-ում (նաև կիրառված է վերջին ժամանակների մեկ այլ անձի վերաբերյալ՝ Դան. 9:26-ում): Չնայած որ «Մեսիա» տիտղոսը հազվադեպ է, Դավթի սերնդից Թագավորի գաղափարը, որը իշխելու է ՅԱՀՎԵի ժողովրդի վրա, պարբերաբար կրկնվող է: Նաև պետք է որ ընդունել, որ Հիսուսը չի համապատասխանում ՀԿ-յան Մեսիայի ընդհանուր նկարագրությանը:

ա. Իսրայելում առաջնորդ չէր

բ. պաշտոնապես քահանայի կողմից օծված չէր

գ. միայն Իսրայելի համար փրկիչ չէր

դ. ոչ միայն «մարդու որդի», այլ զարմանալիորեն նաև «Աստծո Որդի» էր

ՀԱՏՈՒՄ ԹԵՄԱ. ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻ

ՀԱՏՈՒՄ ԹԵՄԱ. ԱՍԾՈՒ ՈՐԴԻ

❖ «**Հիսուս**» Եբրայերեն անունը նշանակում է «ՅԱՀՎԵՆ փրկում է», «ՅԱՀՎԵՆ փրկություն է», «ՅԱՀՎԵՆ փրկություն է բերում»: Այն նույնն է, ինչ ՀԿ-յան «Հեսու» անունը: «Հիսուս» անունը ծագել է եբրայերենի փրկություն բառից՝ «ոսեա» (“*hosea*”), ածանցված Աստծո ուխտի «ՅԱՀՎԵ» անվանը (տես՝ ՀԱՏՈՒՄ ԹԵՄԱ. Աստծո անունները, Կող. 1:3): Սա էր Աստծո կողմից Տիրոջ հրեշտակի միջոցով նախատեսված անունը (տես՝ Մատթ. 1:21):

❖ «**Աստծո կամրով**» Այս նույն ներածական արտահայտությունը կիրառվում է 1 Կորնթ. 1:1; 2 Կորնթ. 1:1, Եփես. 1:1 և 2 Տիմ. 1:1-ում: Պողոսը համոզված էր, որ Աստված ընտրել էր իրեն Առաքյալ լինելու: Կոչման վերաբերյալ իր այս հատուկ զգացողությունը սկսվեց Դամասկոսի ճանապարհին իր դարձի ժամանակից (տես՝ Գործք 9:1-22, 23:3-16, 26:9-18): Բացման այս արտահայտությունը

շեշտադրում է, որ Պողոսը հասկանում է Աստուծուց իրեն տրված իշխանությունը: Տե՛ս ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Աստծո կամքը, Եփես. 1:9-ում:

❖ **«Տիմոթեոս եղբայր»** Տիմոթեոսի անունը նշանակում էր «Աստծո կողմից պատվելի» կամ «Աստծո պատվելին»: Նա ուներ հրեա մայր (տես՝ Գործք 16:1; 2 Տիմ. 1:5) և հույն հայր (Գործք 16:1): Նա դարձի էր եկել այն ժամանակ, երբ Պողոսն իր առաջին միսիոներական ճամփորդությունը կատարեց Դերբե, Լյուստրիա (տես՝ Գործք 16:1): Պողոսը նրան հրավիրեց միանալու միսիոներական թիմին իր երկրորդ ճամփորդությանը, հավանաբար Հովհաննես Մարկոսին փոխարինելու համար (տես՝ Գործք 15:36-41): Պողոսը թվատեց նրան, որպեսզի պատրաստի նրան հրեաների մեջ գործելու համար (տես՝ Գործք 16:3): Նա դարձավ Պողոսի հավատարիմ ներկայացուցիչը, աշակերտը և դժվար օրերի գործակիցը (տես՝ Գործք 16:1-17:14; 18:5-19:22; 20:4; Հռոմ. 16:21; 1 Կորնթ. 4:17; 16:10; 2 Կորնթ. 1:1, 19; Փիլ. 1:2; 2:19; Գաղ. 1:1; Փիլիմոն, Կող. 1:4 և 1 և 2 Տիմոթեոս):

Նա մի քանի նամակներում նշված է Պողոսի հետ (տես՝ 2 Կորնթ. 1:1; Փիլ. 1:1; 1 Թեսաղ. 1:1; 2 Թեսաղ. 1:1 և Փիլիմոն): Սա չի նշանակում, որ նա այս նամակների համահեղինակն էր, այլ արտահայտում է Տիմոթեոսի ներկայությունը և ողջույնները: Հնարավոր է, որ Տիմոթեոսը աշխատել է որպես Պողոսի դպիրը, ինչպես Շիդան և Տիվբիկոսն էին:

1:2 «սուրբերը» «Սուրբեր» (*hagioi*) բառը աստվածաբանորեն կապված է ՀԿ-յան «սուրբ» (*kadosh*) տերմինի հետ, որը նշանակում է «Աստծո ծառայության համար առանձնացված» (տես՝ 1 Կորն. 1:2; 2 Կորնթ. 1:1; Հռոմ. 1:1; Եփես. 1:1; Փիլ. 1:1): ՆԿ-ում այն հոգնակի է, բացի մի տեղից՝ Փիլ. 4:21, նույնիսկ այնտեղ այն կիրառվում է հավաքական համատեքստում: Փրկված լինել նշանակում է մաս կազմել հավատքի ուխտի համայնքի, հավատացյալների ընտանիքի, որոնց պետք է ծառայենք (տես՝ 1 Կորնթ. 12:7):

Աստծո ժողովուրդը սուրբ են Հիսուսի արդարության շնորհիվ (տես՝ Հռոմ. 4 և 2 Կորնթ. 5:21): Աստծո կամքն է, որ նրանք սուրբ կյանքերով ապրեն (տես՝ Կող. 1:22; 3:12; Եփես. 1:4; 2:10; 4:1; 5:27; 1 Պետ. 1:16): Հավատացյալները թե՛ հոճակված են սուրբ (սրբության դիրքը) և թե՛ կանչված են սրբության կյանքն ապրելու (սրբության ընթացքը): Տե՛ս ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Սրբագործում, Եփես. 1:1-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲԵՐ (*hagios*)
SPECIAL TOPIC: SAINTS (*hagios*)

Սա երբայերենի *kadosh* (BDB 871) բառի հունարեն նույնիմաստ բառն է, որն ունի ինչ-որ մեկի, ինչ-որ բանի կամ ինչ-որ տեղի ՅԱՀՎԵԻ բացառիկ նպատակի համար առանձնացված լինելու նշանակությունը (BDB 871): Այն արտահայտում է «սրբվածներ» /the sacred/ անգլերեն բառի գաղափարը: ՅԱՀՎԵՆ Իր բնությամբ (հավիտենական՝ չարարված Հոգի) և Իր բնավորությամբ (բարոյական կատարելությամբ) առանձնացված է մարդկությունից: Նա է չափանիշը, որի միջոցով բոլորը չափվում են և դատվում: Նա հավիտենական և Սուրբ է:

Աստված ստեղծել է մարդուն հաղորդակցվելու համար, սակայն մարդու անկումը (Ծննդոց 3) Սուրբ Աստծո և մեղավոր մարդկության միջև փոխհարաբերության և բարոյական սկզբունքների անդունդ ստեղծեց: Աստված որոշեց վերականգնել Իր գիտակից արարչագործությանը, ուստի Նա կոչ է անում Իր ժողովրդին «սուրբ» լինելու (տես՝ Ղևտ. 11:44; 19:2; 20:7,26; 21:8): ՅԱՀՎԵԻ հետ հավատքի փոխհարաբերությամբ Իր ժողովուրդը սուրբ է դառնում Նրա հետ ունեցած ուխտի մեջ մնալու դիրքով, սակայն նրանք նաև կանչված են սուրբ կյանք ապրելու (տես՝ Մատթ. 5:48):

Այս սրբության կյանք ապրելը հնարավոր է, քանի որ հավատացյալները լիովին ընդունված և ներված են Հիսուսի կյանքի, գործի միջոցով և իրենց մտքերում ու սրտերում Սուրբ Հոգու ներկայությամբ: Սա ստեղծում է պարադոքսալ իրավիճակ՝

1. սուրբ լինելու՝ հանուն Քրիստոսի միջոցով մեր վրա հազաժ արդարության (այսինքն՝ Հռոմ .4)
2. կանչված սուրբ կյանք ապրելու՝ հանուն Սուրբ Հոգու ներկայության (տես՝ Հատուկ Թեմա . Սրբացում)

Հավատացյալները «սուրբեր» են (*hagioi*)՝

1. Սուրբի կամքի համաձայն (Հայր Աստծո. տես՝ Հովհ.6:29,40; 1 Պետ. 1:15-16)
2. Սուրբ Որդու կատարած գործի շնորհիվ (Հիսուսի. տես՝ 2 Կորնթ.5:21; 1 Պետ. 1:18-21)
3. մեր մեջ Սուրբ Հոգու ներկայության շնորհիվ (տես՝ Հռոմ.8:9-11,27)

ՆԿ-ը միշտ դիմում է սուրբերին որպես ՀՈԳՆԱԿԻ (բացառությամբ մեկ տեղի՝ Փիլ.4:21, սակայն նույնիսկ այդտեղ համատեքստը ՀՈԳՆԱԿԻ իմաստով է): Փրկված լինել նշանակում է լինել ընտանիքի, համայնքի, մարմնի, շինության մի մաս: Աստվածաշնչյան հավատքը սկսում է անձնական ընդունելությամբ, սակայն հետևանքը լինում է հավաքական փոխհարաբերությունը: Մենք բոլորս էլ պարզևներ ունենք (տես՝ 1 Կորնթ.12:11) Քրիստոսի մարմնի՝ եկեղեցու, առողջության, աճման և բարեկեցության համար (տես՝ 1 Կորնթ.2:7): Մենք փրկվել ենք ծառայելու համար: Սրբությունը մեր ընտանիքի բնութագրականն է:

Հավատացյալների համար այն դարձավ որպես անուն՝ տիտղոս (տես՝ Գործք 9:13,32,41; 26:10; Հռոմ.1:7; 1 Կորնթ.1:2; 2 Կորնթ.1:1; Եփես.1:1; Փիլ.1:1; Կող.1:2) և ուրիշներին ծառայության նշանակելու կերպ (տես՝ Հռոմ. 12:13; 16:2; Եփես. 1:15; Կող. 1:4; 1 Տիմ. 5:10; Եբր. 6:10): Պողոսը հեթանոս եկեղեցիներից հատուկ մեկանգամյա նվիրատվություն վերցրեց Երուսաղեմի Մայր Եկեղեցու կարիքավորների համար (տես՝ Հռոմ. 15:25-26; 1 Կորնթ. 16:1; 2 Կորնթ. 8:4; 9:1):

❖ «**հավատարիմ /հավատացյալ/ եղբայրներ**» Սուտ վարդապետների հերձվածողության դեմ պայքարելու համար գրված մի գրքում նմանատիպ հատկությունը կարևոր նշանակություն ունի: Պողոսը հավատում էր, որ եկեղեցին հավատարիմ էր մնացել Պողոսին, Եպափրասին և նրանց հանձնված Հիսուս Քրիստոսի ավետարանին:

«Հավատք», «վստահություն» և «հավատալ» բոլոր բառերն ունեն միևնույն հունարեն արմատը՝ *pistis* (գոյական) և *pisteuō* (բայ): Այս խոսքի առաջնային շեշտադրումը Աստծո վստահելիությունն է և ոչ թե մարդու անկեղծ ու ոգևորված պատասխանը: Հավատացյալները պետք է ընդունեն և վստահեն Նրա վստահելի բնավորության և հավիտենական խոստումների համաձայն: Կարևորը բանալին հանդիսանում է հավատացյալի հավատքի առաջկան, և ոչ թե յո հավատքի ուժգնությունը (տես՝ Մատթ. 17:20; Դուկ. 17:6): Քրիստոնությունը ի սկզբանե զոջացող՝ ապաշխարող հավատքով պատասխան է, որին հետևում է հավատարմության կյանքը: Աստվածաշնչյան հավատքը մարդկային ընտրությունների՝ որոշումների մի շարք է՝ ապաշխարություն, հավատք, հնազանդություն և հարատևություն: Աստծո հավատարմությունը վերարտադրվում է Իր զավակների մեջ: Աստծո պատկերը (տես՝ Ծննդ. 1:26-27) վերականգնվում է և մտերմիկ փոխհարաբերությունը կրկին հնարավոր է դառնում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏՔ, ՀԱՎԱՏԱԼ ԿԱՄ ՎՍՏԱՀԵԼ (*Pistis* [գոյական], *Pisteuō* [բայ], *Pistos* [ածական])

SPECIAL TOPIC: FAITH, BELIEVE, OR TRUST

Ա. Աստվածաշնչում սա մի շատ կարևոր տերմին է (տես՝ Եբր. 11:1,6): Սա Հիսուսի առաջին քարոզչության թեման է (տես՝ Մարկ. 1:15): Գոյություն ունեն առնվազն նոր ուխտի երկու պահանջարկներ՝ ապաշխարություն և հավատք (մարկոս 1:15, Գործք 3:16,19, 20:21):

Բ. Ստուգարանությունը

1. «Հավատք» տերմինը ՀԿ-ում նշանակում էր ազնվություն, հավատարմություն կամ վստահելիություն և հանդիսանում էր Աստծո բնավորության նկարագրությունը և ոչ թե մեր:
2. Այն ծագել է եբրայերեն տերմինից (*emun, emunah*, BDB 53, այսինքն՝ Եբր. 2:4), որը սկզբնապես նշանակում էր «վստահ լինել կամ հաստատ»: Հավատքը պահելը՝
ա. անձին ընդունելն է (անձնական վստահություն, հավատք, տես՝ ստորև Ե . 1 .)
բ. անձի մասին ասված ճշմարտություններին հավատալը (այսինքն՝ Սուրբ Գիրքը, տես՝ ստորև Ե . 5 .)
գ. այդ անձի պես կյանք ապրելը (այսինքն՝ Քրիստոսի նման ապրելը)

Գ. ՀԿ-յան կիրառությունը

Պետք է շեշտել, որ Աբրահամի հավատքը ապագա Մեսիայի վրա չէր, այլ Աստծո խոստման, որ ինքը զավակ և սերունդներ է ունենալու (տես՝ Ծննդոց 12:2, 15:2-5, 17:4-8, 18:14, Հռոմ . 4:1-5): Աբրահամն այս խոստմանը արձագանքեց վստահելով Աստծուն (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼ, ՎՍՏԱՀԵԼ, ՀԱՎԱՏՔ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ) և Նրա խոսքին: Նա դեռ ուներ կասկածներ և մտահոգություններ այս խոստման հետ կապված, որի իրականացման համար տասներեք տարի պահանջվեց: Նրա անկատար հավատքը սակայն ընդունվեց Աստծո կողմից: Աստված հոժար է աշխատելու թերի մարդկային էակների հետ, որոնք կարձագանքեն Իրեն և Իր խոստումներին հավատքով, անգամ եթե այն միայն մանանեխի հատի չափ է (տես՝ Մատթ . 17:20) կամ խառնուրդ հավատք է (տես՝ Մարկ . 9:22-24):

Դ. ՆԿ-յան կիրառությունը

«Հավատալ» տերմինը հունարենի *pisteuō* կամ *pistis* ԲԱՅից է, որը թարգմանվում է հայերենի որպես «հավատալ», «հավատք կամ «վստահություն»: Օրինակ, ԳՈՅԱԿԱՆԸ թի հանդիպում Հովհաննեսի ավետարանում, սակայն ԲԱՅԸ հաճախ է կիրառվում: Հովհ . 2:23-25-ում հայտնի չէ, թե արդյոք ամբողջ անկեղծությամբ էր նվիրված Նազովրեցի Հիսուսին որպես Մեսիայի: Այլ օրինակներ «հավատալ» տերմինի հետ կապված, որոնք մակերեսորեն են կիրառվում, գտնվում են Հովհ . 8:31-59 և Գործք 8:13, 18-24-ում: Իրական սուրբգրային հավատքը ավելին է, քան սկզբնական արձագանքը: Դրան պետք է հետևի աշակերտության գործընթացը (տես՝ Մատթ . 13:20-23, 31-32, 28:19-20):

Ե. Դրա կիրառությունը նախդիրներով՝

1. *eis* նշանակում է «դեպի մեջ»: Այս յուրահատուկ կառուցվածքը շեշտադրում է հավատացյալների Հիսուսի մեջ դրած իրենց հավատքը, վստահությունը:
ա. Իր անվան մեջ (Հովհ . 1:12, 2:23, 3:18, 1 Հովհ . 5:13)
բ. Նրա մեջ (Հովհ . 2:11, 3:15, 18, 4:39, 6:40, 7:5, 31, 39, 48, 8:30, 9:36, 10:42, 11:45, 48, 12:37, 42, Մատթ . 18:6, Գործք 10:43, Փիլ . 1:29, 1 Պետ . 1:8):
գ. Իմ մեջ (Հովհ . 6:35, 7:38, 11:25, 26, 12:44, 46, 14:1, 12, 16:9, 17:20)
դ. Որդու մեջ (Հովհ . 3:36, 9:35, 1 Հովհ . 5:10)
ե. Հիսուսի մեջ (Հովհ . 12:11, Գործք 19:4, Գաղ . 2:16)
զ. Լույսի մեջ (Հովհ . 12:36)
է. Աստծո մեջ (Հովհ . 14:1)
2. *ev* նշանակում է «մեջ» ինչպես Հովհ . 3:15, Մարկ . 1:15, Գործք 5:14-ում է
3. *epi* նշանակում է «մեջ» կամ «վրա», ինչպես Մատթ . 27:42, Գործք 9:42, 11:17, 16:31, 22:19, Հռոմ . 4:5, 24, 9:33, 10:11, 1 Տիմ . 1:16, 1 Պետ . 2:6-ում

4. ՏՐԱԿԱՆ ՀՈՒՆՎԸ առանց ՆԱԽԴԻՐԻ ինչպես Հովհ. 4:50, Գաղ. 3:6, Գործք 18:8, 27:25, 1 Հովհ. 3:23, 5:10-ում
5. *hoti*, որը նշանակում է «հավատալ, որ», տալիս է այն բովանդակությունը, թե ինչին հավատալ՝
 - ա. Հիսուսն է Աստծո Սուրբը (Հովհ. 6:69)
 - բ. Հիսուսն է Ես Եմը (Հովհ. 8:24)
 - գ. Հիսուսը Հոր մեջ է և Հայրը Նրա մեջ է (Հովհ. 10:38)
 - դ. Հիսուսը Մեսիան է (Հովհ. 11:27, 20:31)
 - ե. Հիսուսը Աստծո Որդին է (Հովհ. 11:27, 20:31)
 - զ. Հիսուսը ուղարկվել էր Հոր կողմից (Հովհ. 11:42, 17:8, 21)
 - է. Հիսուսը Հոր հետ մեկ է (Հովհ. 14:10-11)
 - ը. Հիսուսը եկել է Հորից (Հովհ. 16:27, 30)
 - թ. Հիսուսն Իր ինքնությունը մեկացնում է Հոր ուխտի անվան հետ՝ «Ես Եմ» (Հովհ. 8:24, 13:19)
 - ժ. Մենք ապրելու ենք Նրա հետ (Հռոմ. 6:8)
 - ի. Հիսուսը մահացավ և հարություն առավ (1 Թեսաղ. 4:14)

❖ «**Քրիստոսով / Քրիստոսի մեջ**» Սա քերականական կազմություն է, որը կոչվում է տեղանքային (ոլորտի): Սա Պողոսի կողմից Քրիստոնյաներին նկարագրելու սիրելի կերպերից մեկն էր: Որպես հավատացյալներ մենք ապրում ենք, շարժվում և կանք Նրա մեջ՝ Նրանով (տես՝ Գործք 17:28): Նա է սկիզբը և աղբյուրը բոլոր հոգևոր օրհնությունների: Պողոսն այս արտահայտությունը 64 անգամ օգտագործում է («Քրիստոսի մեջ / Քրիստոսով», «Նրա մեջ», «Սիրելիի մեջ»): Տե՛ս ամբողջական գրառումը Եփես. 1:4-ում:

❖ «**շնորհ և խաղաղություն ձեզ**» Հունարեն նամակներում սովորական բարևի խոսքը «ողջուն» էր (*charein*, տես՝ Գործք 15:23; 23:36; Հակ. 1:1): Պողոսը իրեն հատուկ կերպով սա փոխեց շատ նմանատիպ հնչեղություն ունեցող, սակայն Քրիստոնեական տերմինով՝ շնորհով (*charis*): Շատերը ենթադրում էին, որ Պողոսը ինչ-որ տեղ միաձուլում էր հունարենի և եբրայերենի ողջունի ձևերը՝ խաղաղություն (*shalom*): Չնայած, որ սա գրավիչ տեսություն է, սակայն այս տեսություն չափից ավելին է ներկայացնում Պողոսին բնորոշ այս ողջունի ներածական արտահայտության մեջ (տես՝ Հռոմ. 1:7; 1 Կորնթ. 1:3; 2 Կորնթ. 1:2; Փիլ. 1:2 և Փիլիմոն 3):

«Շնորհը» հատուկ բառ է, որը նկարագրում է Աստծո սիրառատ, ողորմած բնավորությունը: Մարդիկ Աստծո առաջ արդարացված են Նրա էության շնորհիվ, և ոչ թե իրենց: Աստծո բարությունը, առատաձեռնությունը, սիրառատությունը, ներողամտությունը, ուշ բարկանալը, գթառատությունն ու ողորմությունն է, որ ձևավորում է մեղավոր՝ ընկած մարդկության համար միակ հույսը (տես՝ Ելից 34:6-7, Նեեմ. 9:17, Սաղմ. 103:8-14, Հովել 2:13, Միք. 6:18-20): Քրիստոնեությունը հիմնված է Աստծո անփոփոխ բնավորության (տես՝ Մաղ. 3:6, Հակ. 1:17), Հիսուս Քրիստոսի կատարած գործի (տես՝ Մարկ. 10:45, 2 Կորնթ. 5:21) և Սուրբ Հոգու ծառայության վրա (տես՝ Հովհ. 14:25-26, 16:7-15):

«Խաղաղությունը» Աստծո բնավորությունը և ավետարանի խոստումները հասկանալու արդյունքն է (տես՝ Հովհ. 14:27, 16:33): Խաղաղությունը անկախ իրավիճակներից, կործանիչ կեղծ ուսմունքներից կամ հալածանքներից, ներքին ուրախություն և կայունություն է (տես՝ Փիլ. 4:7, Կող. 3:15):

❖ «**Հայր Աստված**» Այսպես կարող էք ընթերցել հնագույն հունարեն ունցիալ (բաղաձայնային) ձեռագրերում՝ B, D, K, L, հնագույն Վուլգատայում, Փեշիթայում և Ղպտի թարգմանություններում և Օրիգենի ու Ոսկեբերանի կողմից օգտագործված հունարեն տեքստերում: Հետևյալ ձեռագրերը՝ x, A, C, G ավելացնում են «մեր Տեր Հիսուս Քրիստոսը»: Այս արտահայտությունը կարելի է գտնել նաև Կող. 1:3-ում: Սա Պողոսի բացման աղոթքների նորմալ արտահայտման ձև էր (տես՝ Հռոմ. 1:7, 1

Կորնթ. 1:3, 2 Կորնթ. 1:2, Գաղ. 1:3, Եփես. 1:2, Փիլ. 1:2, 2 Թեսաղ. 1:2, 1 Տիմ. 1:2, 2 Տիմ. 1:2 և Տիտու 1:4): UBS⁴ ավելի կարճ տարբերակը գնահատում է “A” (հաստատ):

«Հայր» բառը չի օգտագործվում սեռական սերնդաբանության կամ ժամանակագրական հերթականության իմաստով, այլ ընտանեկան մտերմիկ փոխհարաբերության: Աստված ընտրեց ընտանեկան տերմիններ, որպեսզի Իրեն հայտնի մարդկությանը (տես՝ Ովսեա 2-3, որտեղ Աստված ներկայացված է որպես խանդավառ, հավատարիմ սիրեկան, և գլուխ 11-ը, որտեղ Նա ներկայացվում է որպես սիրող հայր և մայր):

Հայտնության Աստվածը հունական փիլիսոփայության Հիմնական Շարժիչը կամ Առաջին Պատճառը չէ, այլ Հիսուս Քրիստոսի Հայրը: Աստվածաշունչը մարդկային մտայնության փիլիսոփայություն չէ, այլ աստվածային ինքնաբացահայտում՝ հայտնություն, որը հնարավոր չէ բացահայտել մարդկային վերլուծությամբ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՅՐ **SPECIAL TOPIC: FATHER**

ՀԿ-ը ծանոթացնում է Աստծո՝ որպես Հայր մտերմիկ ընտանեկան փոխհարաբերությունը (տես՝ Հատուկ Թեմա. Աստծո Հայրությունը).

1. Իսրայելի ազգը հաճախ բնութագրվում է որպես ՅԱՀՎԵԻ «որդին» (տես՝ Ովս. 11:1, Մաղ. 3:17)
2. նույնիսկ ավելի շուտ՝ 2 Օրինաց գրքում, կիրառվում է Աստծո նմանությունը որպես Հայր (1:31)
3. 2 Օրինաց 32-ում Իսրայելը կոչվում է «նրա որդիները» և Աստված կոչվում է «քձեր հայրը»
4. այս նմանությունը սահմանվում է Սաղմ. 103:13-ում և զարգացում ապրում Սաղմ. 68:5-ում (որբերի հայրը)
5. այն բազմիցս կիրառվում է մարգարեններում (տես՝ Եսայի 1:2, 63:8, Իսրայելը որպես որդի, Աստված՝ Հայր, 63:16, 64:8, Երեմ. 3:4, 31:9):

Հիսուսը խոսում էր արամերեն, որը նշանակում էր, որ Աստվածաշնչում շատ տեղեր, որտեղ հայտնվում է «Հայր» խոսքը, այն հունարենի *Pater* տերմինն է, և արտահայտում է արամերենի *Abba*-ն (տես՝ Մարկ. 14:36): Այս մտերմիկ ընտանեկան տերմինը՝ «Հայրիկ» կամ «Պապա», արտահայտում է Հիսուսի մտերմությունը Հոր հետ: «Հայր» տերմինը ՀԿ-ում ՅԱՀՎԵԻ համար խնայողությամբ էր կիրառվում, սակայն Հիսուսը հաճախ և տարբեր տեղերում կիրառում է այն: Այն հանդիսանում է Աստծո հետ Քրիստոսի միջոցով հավատացյալների նոր փոխհարաբերության կարևոր վկայություն (տես՝ Մատթեոս 6:9):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 1:3-8

³Միշտ ձեզ համար աղոթելիս գոհանում ենք Աստծուց և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հորից՝ ⁴լսելով Հիսուս Քրիստոսի հանդեպ ունեցած ձեր հավատի և բոլոր սրբերի հանդեպ ձեր սիրո մասին: ⁵Այն հույսի համար, որ երկնքում պահված է ձեզ համար, որի մասին նախապես լսեցիք ավետարանի ճշմարիտ խոսքում, ⁶որը ձեզ հասավ, ինչպես ամբողջ աշխարհին. և ձեր մեջ էլ պտուղ է տալիս, այն օրվանից, երբ ճշմարտությամբ լսեցիք ու ճանաչեցիք Աստծո շնորհը. ⁷ինչպես սովորեցիք մեր սիրելի ծառայակից Եպափրասից, որ Քրիստոսի հավատարիմ պաշտոնյան է ձեր մեջ, ⁸որ նույնպես մեզ պատմեց ձեր սիրո մասին Հոգով:

1:3-8 3-8 համարները հունարենում մի նախադասություն են, որը նշանակում է, որ դրանք իրար շարունակող գոհության մի աղոթք են՝ եկեղեցու Քրիստոսի վրա ունեցած հավատքի համար: Հունական նամակներում ընդունված էր նամակը ստացողների համար բացման շնորհակալական

աղոթք բարձրացնել: Այս նամակում Պողոսն ունի երկու բացման աղոթք (տես՝ Կող. 1:3-8 և Կող. 1:9-14):

1:3 «գոհանալ» «Գոհությունը» այս նամակում կրկնվող թեմա է (տես՝ Կող. 1:12, 2:7, 3:15, 4:2), ինչպես որ «ուրախությունը» Փիլիպեցիներին ուղղված նամակում: Հիշե՛ք, որ Պողոսը բանտարկված էր Հռոմում և Կողոսիայում գտնվող եկեղեցին դժվարին ժամանակներ էր վերապրում: Տե՛ս Հատուկ Թեմա. Գոհություն, Կող. 4:2-ում:

❖ **«Աստուծոց և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հորից»** Ուշադրություն դարձրեք Կող. 1:3 և 8-ում Երրորդությանը: Տե՛ս Հատուկ Թեմա Եփես. 1:3-ում:

❖ **«Տեր»** «Տեր» (*kurios*) տերմինը կարող է կիրառվել ընդհանուր նշանակությամբ կամ հատուկ աստվածաբանական իմաստով: Այն կարող է նշանակել «պարոն», «սըր» (տես՝ Հովհ. 4:11, 15, 19, 49, 5:7, 12:21, 20:15), «տիրակալ», «սեփականատեր», «ամուսին» կամ «լիրաժեք աստվածամարդ» (օր՝ Հովհ. 4:1, 6:34, 68; 11:2,3,12,21,27,34,39): Մի համատեքստում այս երկու օրինակների կիրառության լավագույն օրինակը գտնվում է Հովհաննես 9:36 և 9:38-ում:

Այս տերմինի (*adon*) ՀԿ-յան կիրառությունը ծագել է ռաբբիների կողմից Աստծո ՅԱՀՎԵ անվան արտասանության դժկամությունից, որը եբրայերենի «լինել» բայն է (տես՝ Ելից 3:14): Նրանք վախենում էին խախտել այն պատվիրանը, որն ասում էր. «Քո Տեր Աստծո անունը դատարկ տեղը չհիշատակես» (տես՝ Ելից 20:7, 2 Օրինաց 5:11): Նրանք կարծում էին, որ եթե չարտաբերեն՝ չարտասանեն այն, ապա դատարկ տեղը չէին հիշատակի: Ուստի եբրայերեն *adon* բառը փոխարինեցին հունարեն *Kurios* (Տեր) բառով, որն ունի միևնույն իմաստը:

ՆԿ-յան հեղինակներն այս տերմինը կիրառում էին Քրիստոսի աստվածությունը նկարագրելու համար: «Հիսուսը Տեր է» արտահայտությունը վաղ եկեղեցում հանրորեն հավատքի և մկրտության դավանության սահմանումն էր (տես՝ Հռոմ. 10:9-13, 1 Կորնթ. 12:3, Փիլիպ. 2:11):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ SPECIAL TOPIC: THE NAMES FOR DEITY

Ա. *El* (BDB 42, KB 48)

- Աստվածության համար սեռային հնագույն տերմինի բնագիր նշանակությունը անհայտ է, թեև շատ գիտնականներ համարում են, որ այն ծագել է աքքադական «ուժեղ լինել» կամ «զորավոր լինել» արմատից (տես՝ Ծննդ. 17:1; Թվոց 23:19; 2 Օր. 7:21; Սաղմ. 50:1):
- Քանանացիների պանթեոնում ամենաբարձր աստվածը *El* է (Ռաս Շամրայի տեքստերը):
- Աստվածաշնչում *El* հաճախ բաղադրվում է այլ տերմինների հետ: Այս համադրությունները դարձան Աստծուն բնութագրելու միջոց:
 - El-Elyon* («Բարձրյալ Աստված» BDB 42 & 751 II), Ծննդ. 14:18-22; 2 Օր. 32:8; Եսայի 14:41
 - El-Roi* («Աստված, որ տեսնում է» կամ «Աստված, որ հայտնում է Իրեն» BDB 42 & 909), Ծննդ. 16:13
 - El-Shaddai* («Ամենակարող Աստված» կամ «բոլոր գթությունների Աստված» կամ «Լեռան Աստված» BDB 42 & 994), Ծննդ. 17:1; 35:11; 43:14; 49:25; Ելից 6:3
 - El-Olam* («Հավիտենական Աստված» BDB 42 & 761), Ծննդ. 21:33: Այս տերմինը աստվածաբանորեն կապված է Դավթին տրված Աստծո խոստման հետ, 2 Թագ. 7:13, 16
 - El-Berit* («Ուխտի Աստված» BDB 42 & 136), Դատ. 9:46
- El* հավասարեցվում է հետևյալ անունների հետ՝
 - YHWH (ՅԱՀՎԵ) Սաղմ. 85:8; Եսայի 42:5
 - Elohim* Ծննդ. 46:3; Հոր 5:8, «Ես եմ *El-ը*, քո հոր *Elohim-ը*»
 - Shaddai* Ծննդ. 49:25
 - «նախանձոտ» Ելից 34:14; 2 Օր. 4:24; 5:9; 6:15
 - «ողորմած» 2 Օր. 4:31; Նեեմ. 9:31
 - «հզոր ու սհարկու» (մեծ ու սհեղ) 2 Օր. 7:21; 10:17; Նեեմ. 1:5; 9:32; Դան. 9:4
 - «գիտություն» 1 Թագ. 2:3

- ը. «իմ ամուր ապաստարան» 2 Թագ.22:33
- թ. «իմ վրեժխնդիր» 2 Թագ.22:48
- ժ. «սուրբ» Եսայի 5:16
- ի. «գորություն» Եսայի 10:21
- լ. «իմ փրկություն» Եսայի 12:2
- խ. «մեծ ու հզոր» Երեմ.32:18
- ծ. «հատուցում» Երեմ.51:56

5. ՀԿ-ում Աստծո համար գրված բոլոր անունների համադրությունը գտնվում է Հեսու 22:22-ում (*El, Elohim, YHWH*, կրկնվող)

Բ. *Elyon* (BDB 751, KB 832)

1. Այս բառի հիմնական նշանակությունն է՝ «բարձր», «մեծարված» կամ «բարձրացված» (տես՝ Ծննդ.40:17; 3 Թագ.9:8; 4 Թագ.18:17; Նեեմ.3:25; Երեմ.20:2; 36:10; Սաղմ.18:13)
2. Այն կիրառվել է Աստծո մի քանի այլ անունների՝ տիտղոսների հետ զուգահեռ իմաստով՝
 - ա. *Elohim* (Էլոհիմ) – Սաղմ.47:1-2; 73:11; 107:11
 - բ. *YHWH* (ՅԱՀՎԵ) – Ծննդ.14:22; 2 Թագ.22:14
 - գ. *El-Shaddai* (Էլ-Շադայ) – Սաղմ.91:1,9
 - դ. *El* (Էլ) – Թվոց 24:16
 - ե. *Elah* (Էլահ) – հաճախ օգտագործվում է Դանիել 2-6 և Եզրաս 4-7, կապված *illair* բառի հետ (արամերեն «Բարձրյալ Աստված») Դան.3:26; 4:2; 5:18,21
3. Այն հաճախ կիրառվել է ոչ իսրայելցիների կողմից.
 - ա. Մելքիսեդեկ, Ծննդ.14:18-22
 - բ. Բաղասամ, Թվոց 24:16
 - գ. Մովսեսը, ազգերի մասին 2 Օր.32:8-ում խոսելիս
 - դ. Ղուկասի Ավետարանը ՆԿ-ում, գրված հեթանոսներին, այն նույնպես կիրառում է հունարեն *Hupsistos* բառի համարժեքը (տես՝ 1:32,35,76; 6:35; 8:28; Գործք 7:48; 16:17)

Գ. *Elohim* (ՀՈԳՆԱԿԻ), *Eloah* (ԵԶԱԿԻ), հիմնականում կիրառված է պոեզիայի մեջ (BDB 43, KB 52)

1. Այս տերմինը ՀԿ-ից դուրս չէր գտնի
2. Այս բառը կարող է բնութագրել Իսրայելի Աստծուն կամ ազգերի աստվածներին (տես՝ Ելից 3:6; 20:3): Աբրահամի ընտանիքը բազմաստված էր (տես՝ Հեսու 24:2)
3. Այն կարող է վերաբերել իսրայելացի դատավորներին (տես՝ Ելից 21:6; Սաղմ.82:6)
4. *Elohim* տերմինը նաև կիրառվում էր այլ հոգևոր էակների համար (հրեշտակներ, դևեր) ինչպես 2 Օր.32:8-ում (LXX); Սաղմ.8:5; Հոր 1:6; 38:7
5. Աստվածաշնչում աստվածության համար սա առաջին անունը կամ տիտղոսն է (տես՝ Ծննդ.1:1): Այն կիրառված է առանձին մինչև Ծննդ.2:4, որտեղ համադրվում է YHWH –ի հետ: Այն հիմնականում (աստվածաբանորեն) վերաբերում է Աստծուն որպես արարչի, պահապանի և այս երկրագնդի վրա կյանք պարզևողի (տես՝ Սաղմ.104):
 Այն *El* բառի հոմանիշն է (տես՝ 2 Օր.32:15-19): Նաև համարժեք իմաստն ունի YHWH-ի, ինչպես Սաղմ.14-ում (*Elohim*, հհ.1,2,5; YHWH, հհ. 2,6; նույնիսկ *Adon*, հ.4):
6. Չնայած այն ՀՈԳՆԱԿԻ թվով է և կիրառվում է այլ աստվածների համար, այս տերմինը հաճախ բնութագրում է Իսրայելի Աստծուն, սակայն միաստվածությանը մատնանշելիս սովորաբար կիրառվում է ԵԶԱԿԻ թվով ԲԱՅՐ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱՎ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ):
7. Տարօրինակ է, որ Իսրայելի միակ Աստծո ընդհանուր անունը ՀՈԳՆԱԿԻ է: Չնայած անհատականությանը, ահա այդ տեսությունները.
 - ա. Եբրայերենը ունի շատ ՀՈԳՆԱԿԻՆԵՐ, հաճախ կիրառվող շեշտադրության համար: Հետագայում եբրայերեն քերականական առանձնահատկությամբ այս թեմայի հետ սերտորեն կապ կունենա «մեծության հոգնակին», որտեղ ՀՈԳՆԱԿԻՆ կիրառվում է մեծացնելու տվյալ հասկացությունը:
 - բ. Սա կարող է վերաբերել հրեշտակային խորհրդին, որի հետ Աստված հանդիպում է երկնքում և որը կատարում է Նրա հրամանները (տես՝ Հովհ.1:3,10; Հռոմ.11:36; 1 Կորնթ.8:6; Կող.1:15; Եբր.1:2; 2:10):
 - գ. Նույնիսկ հնարավոր է, որ սա արտացոլում է ՆԿ-ի այն հայտնությունը, որ Աստված երեք անձ է մեկում: Ծննդ.1:1-ում Աստված արարում է, Ծննդ.1:2-ում՝ Հոգին շարժվում է, իսկ ՆԿ-ում՝ Հիսուսը Հայր Աստծո գործակալն է ստեղծագործության մեջ (տես՝ Հովհ.1:3,10; Հռոմ.11:36; 1 Կորնթ.8:6; Կող.1:15; Եբր.1:2; 2:10):

Գ. YHWH (BDB 217, KB 394)

1. Մա այն անունն է, որը պատկերում է աստվածությանը որպես ուխտ կապող Աստծո, փրկիչ Աստծո, ազատագրող Աստծո: Մարդիկ ուխտադրույժ են, սակայն Աստված հավատարիմ է Իր խոսքին, խոստմանը, ուխտին (տես՝ Մադմ.103):

Այս անունը առաջին անգամ նշվել է *Elohim* բառի հետ համադրված Ծննդ.2:4-ում: Ծննդոց 1-2-ում գոյություն չունեն արարչագործության երկու արձանագրություններ, այլ երկու շեշտադրումներ՝ (1) Աստված որպես տիեզերքի արարիչ (Ֆիզիկական) և (2) Աստված որպես մարդկության հատուկ արարիչը: Ծննդոց 2:4-3:24-ը սկսում է մարդկությանը առանձնաշնորհված դիրքի և նպատակի հատուկ հայտնությամբ, ինչպես նաև մեղքի հիմնախնդրով և ապստամբությամբ, որոնք միացան այս բացառիկ դիրքին:
2. Ծննդ.4:26-ում ասվում է „*մարդիկ* սկսեցին կանչել ՏԵՐՈՋ (YHWH) անունը: Համենայն դեպս, Ելից 6:3 ակնարկում է, որ առաջին ուխտի մարդիկ (Նահապետները և նրանց ընտանիքները) ճանաչում էին Աստծուն միայն որպես Էլ-Շադայ (*El-Shaddai*): YHWH անունը բացատրվում է միայն մեկ անգամ՝ Ելից 3:13-16-ում, հատկապես հ.14: Այնուամենայնիվ Մովսեսի գրքերը հաճախ մեկնաբանում են բառերը հայտնի բառախաղերով և ոչ թե ըստ ստուգաբանության (տես՝ Ծննդ.17:5; 27:36; 29:13-35): Գոյություն են ունեցել մի քանի տեսություններ այս անվան նշանակության հետ կապված (վերցված IDB, հատոր 2, էջ՝ 409-11):
 - ա. Արաբերեն արմատից՝ «կրակոտ սեր ցուցաբերել»
 - բ. Արաբերեն արմատից՝ «փչել» (YHWH որպես փոթորկող Աստված)
 - գ. Ուգարտիկ (Քանանացիների) արմատից՝ «խոսել»
 - դ. Համաձայն Փյունիկյան մակագրության, ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը նշանակում է «Մեկը, որ պահպանում է» կամ «Մեկը, որ հաստատում է»:
 - ե. Եբրայերեն *Qal* ձևից՝ «Նա, որ է» կամ «Նա, որ ներկա է» (ապառնի իմաստով՝ «Նա որ կլինի»)
 - զ. Եբրայերեն *Hiphil* ձևից՝ «Նա, որ գոյի պատճառ է հանդիսանում»
 - է. Եբրայերեն «ապրել» արմատից (օր.՝ Ծննդ.3:21), որը նշանակում է „հավերժ ապրողը, միակ ապրողը,„
 - ը. Ելից 3:13-16 կոնտեստից ԱՆԿԱՏԱՐ Ժամանակով՝ մի մասը կիրառված ՎԱՐԱԿԱՏԱՐ Ժամանակում, «Ես կշարունակեմ լինելու այն ինչ եղել եմ» կամ «Ես կշարունակեմ լինել այն ինչ միշտ եմ եղել» (տես՝ J. Wash Watts, *A Survey of Syntax in the Old Testament*, p.67 /Ջ. Ուոշ Ուաթս, *Շարահյուսության Ուսումնասիրություն Հին Կտակարանում*, էջ 67):
 - (1) *Yah* (օր.՝ Ալելու – յահ, BDB 219, տես՝ Ելից 15:2; 17:16; Մադմ.89:8; 104:35)
 - (2) *Yahu* ('iah' հայերեն՝ -իա, անունների վերջավորությունը, օր.՝ Եսայիա)
 - (3) *Yo* ('Jo' հայերեն՝ Հո-, անունների սկզբնամասը, օր.՝ Հովել)
3. Շատ շահարկումներ են եղել այս անվան նշանակության հետ կապված (տես՝ NIDOTTE, հատոր 4, էջ՝ 1295-1300): Մա դեռևս առեղծվածային է: Անշուշտ հնարավոր է, որ Մովսեսի հարցը Աստծո բնավորության մասին է (տես՝ Ելից 34:6), ոչ թե անվան: Աստծո պատասխանն է՝
 - ա. Ես շատ առեղծվածային եմ քո համար, որ դու ընկալես
 - բ. Ես եմ Նա, որ ամենուր ներկա է
 - գ. Ես ինքնիշխան եմ և անելու եմ իմ կամքը («Նա է Գոյի պատճառը», Օլբրայթ):
 - դ. *Hiphil* –ը ակնարկում է պատճառական կապը, հետևաբար, «Ես եմ Արարիչ Աստվածը»:
 - ե. Ջոն Ուոլթերը ներկայացնում է՝ Աստված, որը ստեղծում է փոխհարաբերություն (այսինքն՝ ուխտ կապող Աստված):
 - զ. Հրեական Սերտողության Աստվածաշունչը (էջ՝ 111) տալիս է հետևյալ բացատրությունը՝ «Իմ էությունը հայտնի կդառնա Իմ գործողություններից»:
 - է. Ամփոփում, տես՝ NIDOTTE, հատոր 1, էջ՝ 1024-1025 և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Աստվածության անունները, Գ.
 - Պե՛տք է նայել ստուգաբանությանը, թե՛ նկարագրությանը: JPSOA –ը թվարկում է երեք հնարավոր տարբերակներ Եբրայերենի համար՝
 - (1) Ես եմ որ Էն
 - (2) Ես եմ Ով Ես եմ
 - (3) Ես կլինեմ այն ինչ կլինեմ
4. Ավելի ուշ հուդայականության մեջ ուխտի այս անունը դարձավ այնքան սուրբ (քառագիրը), որ հրեաները վախենում էին արտասանել այն, այսպես կխախտեին Ելից 20:7; 2 Օր.5:11; 6:13-ի պատվիրանը: Ուստի նրանք այս բառը փոխարինեցին եբրայերեն «սեփականատեր», «տեր»

«ամուսին» տերմիններով – *adon* կամ *adonai* (իմ տեր): Երբ ՀԿ-ի տեքստերը ընթերցելիս հասնում էին YHWH բառին նրանք արտասանում էին «տեր»: Այդ իսկ պատճառով YHWH բառը անգլերեն (հայերեն) թարգմանություններում գրված է ՏԵՐ:

5. Ինչպես *El*, *YHWH* բառերի հետ հաճախ համադրվում են այլ տերմիններ, որպեսզի շեշտադրվեն Իսրայելի Ուխտի Աստծո որոշակի հատկություններ: Չնայած որ կան շատ հնարավոր համադրված տերմիններ, ահա դրանցից մի քանիսը.

ա. *YHWH – Yireh* (YHWH Եհովա-Իրե՝ Եհովան կհոգա, BDB 217 & 906), Ծննդ.22:14

բ. *YHWH – Ropheka* (YHWH Եհովա-Ռոֆեխա, Եհովան քո բժիշկն է, BDB 217 & 950, *Qal* ԴԵՐԲԱՅ), Ելից 15:26

գ. *YHWH – Nissi* (YHWH Եհովա-Նիսի՝ Եհովան իմ դրոշն է, BDB 217 & 651), Ելից 17:15

դ. *YHWH – Meqaddishkem* (YHWH Եհովա-Մեքադիշկեմ՝ Նա ով հազեցնում է քեզ, BDB 217 & 872, *Piel* ԴԵՐԲԱՅ), Ելից 31:13

ե. *YHWH – Shalom* (YHWH Եհովա-Շալոմ՝ Եհովան իմ խաղաղությունը, BDB 217 & 1022), Դատ.6:24

զ. *YHWH – Sabaoth* (YHWH Եհովա-Սաբաովթ՝ զորքերի Եհովան, BDB 217 & 878), 1 Թագ.1:3, 11; 4:4; 15:2; հաճախ Մարգարեններում

է. *YHWH –Ro' I* (YHWH Եհովա-Ռոյ՝ Եհովան իմ հովիվը, BDB 217 & 944, *Qal* ԴԵՐԲԱՅ), Սաղմ.23:1

ը. *YHWH –Sidqenu* (YHWH Եհովա-Սիդքենյու՝ Եհովան իմ արդարությունը, BDB 217 & 841), Երեմ.23:6

թ. *YHWH – Shammah* (YHWH Եհովա-Շամմա՝ Եհովան այնտեղ է, BDB 217 & 1027), Եզեկ.48:35

❖ **«միշտ ձեր համար աղոթելիս»** «Միշտ» բառը քերականորեն կարող է վերաբերել «աղոթելուն» (NASB, NKJV, NJB) կամ «գոհանալուն» (NRSV, TEV): Աղոթքն ու գոհությունը Պողոսի աստվածաբանության մեջ և կյանքում անքակտելի են: Պողոսն աղոթում էր նրանց համար (տես՝ Կող. 1:9, Եփես. 1:16) և խնդրում էր, որ նրանք էլ աղոթեն իր համար (տես՝ Կող. 4:3, Եփես. 6:18, 1 Թեսաղ. 5:26): Տե՛ս Հատուկ Թեմա. Բարեխոսական աղոթք, Կող. 4:3-ում: Պողոսն այս մասին կրկին նշում է Կող. 1:9-ում: Կարծես թե երկու աղոթք միացված լինեն իրարու:

1:4 «լսելով» Հոգնակի թվով գրված դերանունը վերաբերում էր Պողոսին և նրա միսիոներական թիմակիցներին: Նրանք լսել էին սուտ վարդապետների հետ կապված խնդիրների և հավատացյալների հավատքի մասին Եպափրասից (տես՝ Կող. 1:7,8), որն էլ հիմնել էր այս եկեղեցին:

1:4-5 «հավատք... սեր... հույս» Սա Պողոսի աստվածաբանության ամենասիրելի եռյակն էր (տես՝ Հռոմ. 5:2-5, 1 Կորնթ. 13:13, Գաղ. 5:5-6, 1 Թեսաղ. 1:3, 5:8): Այն արտահայտում է այն վստահությունը, որ ունեն հավատացյալները թե՛ հիմա (հավատք) և թե՛ հստակ ապագայի վախճանի համար (հույս): Այս վստահությունը պետք է ամեն օր սիրով գործադրվի:

1:4 «ձեր հավատք» Այս տերմինը (*pistis*) կարող է ունենալ երեք տարբեր նշանակություն:

1. Դրա ՀԿ-յան հիմքը նշանակում էր «հավատարմություն» կամ «վստահելիություն», հետևաբար, այն կիրառվում էր աստվածահաճո կյանքով ապրող հավատացյալների համար:
2. Այն կիրառվում էր այն հավատացյալների համար, որոնք ընդունում էին Քրիստոսով Աստծո ներման ձրի առաջարկը:
3. Այն կիրառվում էր Հիսուսի վերաբերյալ Քրիստոնեական վարդապետության կամ ճշմարտությունների հավաքական իմաստով (այսինքն՝ «հավատքը», տես՝ Գործք 6:7 և Հուդա 1:3, 20):

Մի քանի սուրբգրային հատվածներում դժվար է տարբերակել, թե ինչ իմաստով է գրված: Տես Հատուկ Թեմա. Հավատք, հավատալ, վստահել, Կող. 1:2-ում:

❖ **«Հիսուս Քրիստոսի հանդեպ/մեջ»** Մովորաբար Պողոսն օգտագործում էր հավատք Քրիստոսի «ներսում» (*eis*) նախդիրը, որը ներկայացնում էր Նրան որպես մարդու հավատքի առարկան՝

օբյեկտը, սակայն այստեղ «մեջ» (*en*) նախդիրն է կիրառվում, որը Հիսուսին նկատի է ունենում որպես գոյություն (տես՝ Կող. 1:2, Գործք 17:28):

❖ **«բոլոր սրբերի հանդեպ ձեր սերը»** Աստծո հանդեպ հավատքը արտահայտվում է ուրիշների հանդեպ սիրով, հատկապես նրանց, ովքեր հավատքի ընտանիքից են (տես՝ Գաղ. 6:10): «Բոլոր» տերմինի կիրառությունը կարևոր նշանակություն ունի սուտ վարդապետների ներկայությամբ խանգարված մի միջավայրի համար: Հավատացյալները պետք է կարողանան տարբերակել ով է սուրբը, և ով՝ ո՛չ: «Սուրբերի» համար տե՛ս Հատուկ Թեմա Կող. 1:2-ում:

❖ **«Հույսը»** Պողոսն այս տերմինը կիրառում էր մի քանի տարբեր, սակայն իրար հետ փոխկապակցված իմաստներով: Հաճախ այն ասոցացվում էր հավատացյալի հավատքի վախճանի հետ: Սա կարող է արտահայտվել որպես փառք, հավիտենական կյանք, վերջնական փրկություն, Երկրորդ Գալուստ, և այլն: Վախճանը հաստատ է, սակայն ժամանակն ունի ապառնի տարր և անհայտ է: Հույսը հաճախ ասոցացվում էր «հավատքի» և «սիրո» հետ (տես՝ Հռոմ. 5:2-5, 1 Կորնթ. 13:13, Գաղ. 5:5-6, Եփես. 4:2-5, 1 Թեսաղ. 1:3, 5:8):

ՀԱՏՈՒՄ ԹԵՄԱ. ՀՈՒՅՍ SPECIAL TOPIC: HOPE

Պողոսը օգտագործում էր այս տերմինը հաճախ մի քանի տարբեր, սակայն կապակցված իմաստներով: Հաճախ այն ասոցացվում էր հավատացյալի հավատքի (օր.՝ 1 Տիմ. 1:1): Սա կարող է արտահայտվել որպես փառք, հավիտենական կյանք, վերջնական փրկություն, Երկրորդ Գալուստ, և այլն: Վախճանը հայտնի է, սակայն ժամանակի տարրը ապագայում է և անհայտ: Այն հաճախ կապվում էր «հավատքի» և «սիրո» հետ (տես՝ 1 Կորնթ. 13:13; 1 Թեսաղ. 1:3; 2 Թեսաղ. 2:16): Ահա Պողոսի կողմից կիրառված ցանկի մի մասը.

1. Երկրորդ Գալուստ, Գաղ. 5:5; Եփես. 1:18; 4:4; Տիմ. 2:13
2. Հիսուսը մեր Հույսը, 1 Տիմ. 1:1
3. Հավատացյալները ներկայանալու են Աստծուն, Կող. 1:22-23; 1 Թեսաղ. 2:19
4. Մեր հույսը երկնքում է, Կող. 1:5
5. Վստահություն ավետարանին, Կող. 1:23; 1 Թեսաղ. 2:19
6. Վերջնական փրկություն, Կող. 1:5; 1 Թեսաղ. 4:13; 5:8
7. Աստծո փառքը, Հռոմ. 5:2, 2 Կորնթ. 3:12; Կող. 1:27
8. Քրիստոսով հեթանոսների փրկությունը, Կող. 1:27
9. Փրկության վստահությունը, 1 Թեսաղ. 5:8
10. Հավիտենական կյանքը, Տիմ. 1:2; 3:7
11. Քրիստոնեական հասունության արդյունքները, Հռոմ. 5:2-5
12. Ամբողջ արարչագործության փրկագործումը, Հռոմ. 8:20-22
13. Որդեգրության վախճանը, Հռոմ. 8:23-25
14. Աստծո համար տիտղոս, Հռոմ. 15:13
15. Պողոսի փափագը հավատացյալների համար, 2 Կորնթ. 1:7
16. ՀԿ-ը որպես ուղեցույց ՆԿ-ի հավատացյալների համար, Հռոմ. 15:4

❖ **«երկնքում պահված է ձեզ համար»** Սա հավատացյալի հույսի համար աստվածային պաշտպանության փոխաբերություն էր (տես՝ 2 Տիմ. 4:8, 1 Պետ. 1:4):

Սուտ վարդապետները չէին կարողանում ազդել հավատացյալների վերջնական փրկության (հույսի) վրա:

❖ **«որի մասին նախապես լսեցիք»** Սա անորոշ կատարյալ սահմանական բաղադրյալ տերմին է՝ «լսել» և «նախապես»: Սա վերաբերում է Եպափրասի ավետարանի քարոզչությանը, որին կողոսացիները անձնապես արդեն իսկ հավատքով արձագանքել էին: Հավատացյալները պետք է լսեն, արձագանքեն, հնազանդեն և հարատևեն:

❖ «ավետարանի ճշմարիտ խոսքում» Այս արտահայտությունը կարելի է մի քանի իմաստով հասկանալ.

1. գործնականում նրանք լսել էին ճշմարտությունը ավետարանի միջոցով
2. նրանք լսել էին ավետարանը ժամանակավորապես
3. դիրքորոշման տեսանկյունից նրանք լսել էին ավետարանը այն ընդունելով որպես ճշմարտացի՝ վստահել խոսք

Նկատեք, թե ինչպես է Կող. 1:6-ում ավետարանը նկարագրվում որպես «Աստծո շնորհը ճշմարտությամբ»: Տե՛ս Հատուկ Թեմա. Ճշմարտությունը Պողոսի թղթերում, Եփես. 1:13-ում:

1:6 «ամբողջ աշխարհին» Սա վերաբերում էր հունա-հռոմեական աշխարհին: Սա ընդունված ՆԿ-յան սահմանում էր (չափազանցություն), որը Մատթ. 28:18-20, Ղուկ. 24:46-47, Գործք 1:8-ի պատճառով դարձավ իրականություն:

Հունարեն տերմինը (*kosmos*) ունի մի քանի կիրառություններ: Այն կարող է վերաբերել՝

1. այս ֆիզիկական մոլորակին
2. մարդկությանը, որն ապրում է այս մոլորակի մակերևույթին
3. մեղավոր մարդկության փիլիսոփայությունները, կառավարական կառույցները, կրթական հաստատությունները և կրոնական համակարգերը, որոնք թույլ են տալիս նրանց՝ մարդկությանը, գործելու Աստծուց անկախ վիճակում:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊՈՂՈՍԻ KOSMOS (ԱՇԽԱՐՀ) ԲԱՌԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ
SPECIAL TOPIC: PAUL'S USE OF KOSMOS (WORLD)**

Պողոսը *kosmos* – տիեզերք տերմինը մի քանի կերպ է կիրառում՝

1. ամբողջ արարված կարգուկանոնը (տես՝ Հռոմ. 1:20, Եփես. 1:4, 1 Կորնթ. 3:22, 8:4,5)
2. այս մոլորակը (տես՝ 2 Կորնթ. 1:12, Եփես. 1:10, Կող. 1:20, 1 Տիմ. 1:15, 3:16, 6:7)
3. մարդիկ (տես՝ Հռոմ. 3:6,19, 11:15, 1 Կորնթ. 1:27-28, 4:9,13, 2 Կորնթ. 5:19, Կող. 1:6)
4. մարդիկ, որոնք կազմակերպված գործում են Աստծուց զատված՝ առանց Նրա (տես՝ 1 Կորնթ. 1:20-21, 2:12, 3:19, 11:32, Գաղ. 4:3, Եփես. 2:2, 12, Փիլ. 2:15, Կող. 2:8,20-23): Շատ նման է Հովհաննեսի կողմից կիրառությանը (այսինքն՝ 1 Հովհ. 2:15-17):
5. ներկայիս աշխարհի կառուցվածքները (տես՝ 1 Կորնթ. 7:29-31, Գաղ. 6:14, նման է Փիլ. 3:4-9, որտեղ Պողոսը նկարագրում է հրեական կառույցները):

Որոշ առումներով այն ունի համընկումներ և դժվար է տարանջատել յուրաքանչյուր կիրառությունը: Այս տերմինը, Պողոսի մտածելակերպում առկա շատ ուրիշ տերմինների պես, պետք է սահմանել անմիջական համատեքստով և ոչ թե նախապես կատարված սահմանմամբ: Պողոսի տերմինաբանությունը սահուն էր (տես՝ Ջեյմս Սթյուարթի *Մարդ Քրիստոսի մեջ* /James Stewart's *A Man in Christ*): Նա չէր փորձում աստվածաբանական բառապաշար ստեղծել, այլ քարոզել Քրիստոսին:

❖ «ձեր մեջ էլ պտուղ է տալիս /և ավելանում/» Սրանք երկուսն էլ ներկա ժամանակի դերբայներ են: Առաջինը չեզոք սեռ է, իսկ երկրորդը՝ կրավորական (անգլերենում), սակայն այս համատեքստում չկա ենթադրվող աստվածաբանական տարբերություն, այլ լուսաբանում է մարդկային և աստվածային գործողությունների ուխտի բալանսը: Պտուղ բերելը վերստին ծննդյան նշան է (տես՝ Կող. 1:10, Մատթ. 13:1-23, Հովհ. 15:16, Գաղ. 5:22-23, Հակոբոս 2:14-26):

NASB	«հասկացաք»
NKJV	«իմացաք»
NRSV	«գիտակցեցիք»
TEV	«իմացաք»
NJB	«ճանաչեցիք»

Սա հունարեն *epignōskō* տերմինի ուժեղացված անորոշ կատարյալ ներգործական սեռի սահմանական եղանակային ձև է, որը ենթադրում է «լիարժեք կերպով և փորձառաբար ճանաչել»:

Կողոսացիները ընդունեցին ավետարանը, որը թե՛ անձ է, և թե՛ ճշմարտություն (միաձուլելով «ճանաչել» բառի իմաստը եբրայերենից և հունարենից): Սա Պողոսի հակազդումն էր հերետիկոսների կողմից մարդկային գիտության վրա կեղծ շեշտադրությանը (տես՝ Կող. 1:9,10):

❖ **«ճշմարտությամբ . . . Աստծո շնորհը»** Սա վերաբերում է Հիսուս Քրիստոսի ավետարանին, որը մարդկային ցեղին վերջնական և լիարժեք կերպով ներկայացնում է Աստծո բնավորությունն ու էությունը: Հավատացյալների ամենամեծ հույսը անփոփոխ, ողորմած Աստծո բնավորության մեջ է (տես՝ Մաղ. 3:6):

Հունարեն «շնորհք» (*charis*) բառը կիրառվում էր կոյնե հունարենում (Ք.Ա. 200-մ.թ. 200թթ.) և Սեպտուագինտայում (Ք.Ա. 250-100թթ.) մի քանի տարբեր իմաստներով՝ գրավչություն, գեղեցկություն, շնորհալիություն, արդարացման պատճառ, օգուտ, բարեգործություն կամ մատակարարում: ՆԿ-ում հիմնականում կիրառվում է Երրորդության Աստծո սիրույն և ողորմությանը անարժան լինելու իմաստով, ով արդարություն է պարգևում և վերականգնում մեղավոր մարդկությանը (տես՝ Եփես. 4:4-7): Շեշտադրությունը միշտ տվողի (Աստծո) արժանիքի վրա է դրված, և ոչ թե ստացողի (մարդկության): Այն ինչ անհրաժեշտ էր՝ Աստված ապահովել է: Մարդուն միայն մնում է արձագանքել (տես՝ Եփես. 2:8-9):

«Ճշմարտության» համար տե՛ս Հատուկ Թեմա. «Ճշմարտությունը» Պողոսի թղթերում, Եփես. 1:13-ում:

1:7 «Եպափրաս» (տես՝ Կող. 4:12-13, Փիլիմոն 23): Նա երեք եկեղեցիների հիմնադիրն էր (Կողոսիայի, Երապոլիսի, Լավոդիկեի) Լիկուս Գետի Հարթավայրում, և Պողոսի ներկայացուցիչը (տես՝ Կող. 1:7): Հավանաբար նա դարձի էր եկել Պողոսի Եփեսոսում մանու ժամանակ (տես՝ Գործք 19:10): Նրա անունը Եպափրոդիտոս անվան կրճատ ձևն էր, որը ստուգաբանորեն կապված էր Ափրոդիտոս աստվածուհու անվան հետ: Մեկ այլ մարդ այս անունով նշված է Փիլ. 2:25, 4:18-ում: Սակայն մեկ այլ աշխարհագրական տարածքից էր:

NASB

NKJV, NRSV

TEV

NJB

«Քրիստոսի հավատարիմ ծառան հանուն մեզ»

«Քրիստոսի հավատարիմ ծառան հանուն ձեզ»

«Քրիստոսի հավատարիմ մշակը հանուն մեզ»

«վստահելի դեսպան մեր համար՝ որպես Քրիստոսի ծառա»

Հնագույն հունարեն ձեռագրերը տարբերվում են իրենց դերանուններով: Մի քանիսը տալիս են «մեր», իսկ մյուսները՝ «ձեր»: «Մեր» դերանունը կարծես թե ըստ տեքստի լավագույն տարբերակն է, քանի որ այդպես է գրված ավելի հին հունարեն ձեռագրերում՝ P⁴⁶, Ռ*, A, B, D*, F և G: Սակայն Միացյալ Աստվածաշնչյան Ընկերության (UBS) աստվածաբանները զգում էին, որ «ձեր»-ն է բնագրային՝ վաղ եկեղեցու հայրերի և հին լատիներենում, արամերենում և կոպտիկ թարգմանություններում (տես՝ Բրյուս Մ. Մետցգեր, *Հունարեն Նոր Կտակարանի Տեքստային Մեկնություններ*, էջ՝ 619-620 /Bruce M. Metzger, *A Textual Commentary on the Greek New Testament*, pp. 619-620 /):

1:8 «ձեր սիրո մասին Հոգով» Այս նամակում զարմանալիորեն Սուրբ Հոգու վերաբերյալ սա միակ հատուկ նշված համարն է, չնայած որ Նրա մասին է հավանաբար ակնարկվում Կող. 1:9-ում «լցվել» և Կող. 3:16-ում՝ «բնակվել» խոսքերում: Սուրբ Հոգով սիրելու առարկան կարող են լինել՝

1. այլ հավատացյալները
2. Պողոսը և նրա միսիոներական թիմը
3. Եպափրասը
4. վերը նշված բոլորը և նույնիսկ կորսվածները

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 1:9-14

Պայտանառով մենք էլ, այն օրվանից, երբ լսեցինք այդ, չենք դադարում ձեզ համար աղոթելուց և խնդրելուց, որ լցվեք Նրա կամքի գիտությամբ՝ ամենայն իմաստությամբ և

հոգևոր հասկացողությամբ: ¹⁰Որ դուք Տիրոջ առջև արժանի կերպով քայլեք, ամեն ինչում Նրան հաճելի ձևով, բոլոր բարի գործերի մեջ պտղաբեր լինելով և աճելով Աստծո գիտությամբ. ¹¹Իր փառքի գործության համեմատ ամենայն գործությամբ զորացած, ձեզ տալով կատարյալ համբերություն և երկայնամտություն՝ ուրախությամբ, ¹²գոհանալով Հորից, որ մեզ արժանացրեց մասնակից լինելու յույսի մեջ բնակվող սրբերի վիճակին: ¹³Որ մեզ ազատեց ծավարի իշխանությունից և փոխադրեց Իր սիրելի Որդու թագավորության մեջ. ¹⁴Ում մեջ ունենք փրկագնություն Նրա արյամբ՝ մեղքերի թողություն.

1:9-20 Հունարենում սա միայն մեկ նախադասություն է: Կող.1:9-12-ը Պողոսի աղոթքն է այս հավատացյալների համար: Կող. 1:13-14-ը նկարագրում է, թե հավատացյալների համար ինչ է արել Հայրը Որդու միջոցով: 15-18 համարները գուցե վաղ Քրիստոնեական մի օրհներգից կամ Որդու ծառայության հետ կապված դավանաբանական սահմանման մեջբերում է (այսինքն՝ այլ հնարավոր օրհներգեր, տե՛ս՝ Փիլ.2:6-11, 1 Տիմ.3:16, 2 Տիմ.2:11-12): Սա համարվում է Պողոսի թղթերում ամենամեծ Քրիստոլոգիական դավանությունը (համեմատեք Փիլ.2:6-11-ի հետ):

1:9 «լսեցինք այդ» Այս եկեղեցին Պողոսը չէր սկսել և ոչ էլ անձամբ ճանաչում էր այդ եկեղեցու անդամներին: Նա լսել էր նրանց հավատքի և սիրո մասին այդ եկեղեցու հիմնադրից՝ Եպափրասից (տե՛ս՝ Կող. 1:7-8):

❖ **«չենք դադարում ձեզ համար աղոթելուց»** Հոգնակի թվի առկայությունը վերաբերում է (1) հենց Պողոսին (այսինքն՝ խմբագրային հոգնակի) կամ (2) Պողոսը և իր միսիոներական թիմը: Առաջնորդները պետք է հետևողականորեն իրենց հոտերը բարձրացնեն Տիրոջը: Տե՛ս Հատուկ Թեմա. Բարեխոսական աղոթք, Կող. 4:3-ում:

❖ **«որ լցվեք»** Սա անորոշ կատարյալ կրավորական ստորադասական է: Հավատացյալները չեն կարող իրենք իրենց լցնել, սակայն նրանք պետք է թույլ տան և համագործակցեն Հոգու հետ (տե՛ս՝ Եփես. 5:18):

«Լցվել» բառը Կող. 1:9-12-ի հիմնական բայն է: Այն համարվում է երկու հարցերից առաջինը, որ Պողոսը տալիս է Հորը կողոսացի հավատացյալների կողմից: Մյուսը նրանց ընթացքի համար է, որպեսզի արժանի ընթացք ունենան (Կող. 1:10): Նկատելք, որ նա կապում է Աստծո գիտությունը աստվածահաճո ապրելակերպի հետ (տե՛ս՝ Եփես. 4:1,17; 5:2,15): Հավատքն առանց գործերի մեռած է (տե՛ս՝ Հակոբոս 2:14-26):

❖ **«Նրա կամքի գիտությամբ»** Այս գիտության (*epignōskō*, այսինքն փորձառական գիտություն, տե՛ս՝ հ.6) բովանդակությունը ավետարանն է: Ավետարանը դա (1) ճշմարտության մարմնացումն է, որին պետք է հավատալ, (2) անձ է, որին պետք է ընդունել, և (3) կյանք է, որ պետք է այդ անձը ապրի: Աստծո կամքն է, որ այդ անհատները անձամբ արձագանքեն Քրիստոսին (տե՛ս՝ Հովհ. 6:29,40), որն էլ ամբողջ «հոգևոր իմաստության և հասկացողության» նպատակն է:

Այս համարը բառախաղ է կեղծ վարդապետների աստվածաբանության վրա: Սա հաստատվում է (1) Պողոսի կողմից «լցվեք» (*plerōma*) բառի կիրառությամբ, որը համարվում է գնոստիկների ամենասիրելի տերմիններից մեկը *աւեռնների* համար՝ բարձ աստծո և հրեշտակային մակարդակների միջև, և (2) նրանց կողմից ծածուկ գիտության շեշտադրմամբ (տե՛ս՝ Կող.2:3): Պողոսի համար ամբողջ լիություն ու գիտությունը Քրիստոսի մեջ էր, որը Աստծո իմաստությունն էր (*Sophia*, տե՛ս՝ Կող. 1:28, 2:3,23; 3:16; 4:5; Եփես. 1:8,17; 3:10) և ամբողջ ճշմարտության (*sunesis*, տե՛ս՝ Կող.2:2) կոնվերգենցիան՝ միացումը:

Ուշադրություն դարձրե՛ք եռակի կրկնությունը՝ «գիտություն», «իմաստություն» և «հանճար»: Սա արտացոլում է կեղծ վարդապետների շեշտադրությունը ծածուկ գիտության վրա (տե՛ս՝ Կող. 2:3): Քրիստոսն է Աստծո ճշմարտությունը (տե՛ս՝ Հովհ. 14:6):

1:10 «արժանի կերպով քայլեք» Սա անորոշ կատարյալ ներգործական է: Այն սահմանվում է չորս ներկա ժամանակի դերբայներով (տես՝ Կող. 1:10-12), որոնք նկարագրում են արժանի կերպով քայլելը (տես՝ Կող. 2:6; 3:7; 4:5; Եփես. 2:10; 4:1,17; 5:2,15; 1 Թեսաղ. 2:12; 4:1): Աստծո կամքն է, որ Իր զավակները ամեն օր արտացոլեն Իր բնավորությունը:

❖ **«բոլոր բարի գործերում պտղաբեր լինելով»** «Պտղաբերության» համար տե՛ս Կող. 1:6-ի գրառումը: Սա այն չորս ներկա ժամանակի դերբայներից առաջինն է (տես՝ Կող. 1:10-12), որը նկարագրում է արժանի կյանքերը:

Աստծո կամքն է, որ հավատացյալներն ապրեն աստվածահաճո կյանքեր: Հավատացյալների բարոյական փոխակերպումը վկայություն է այն բանի, որ Աստծո պատկերը վերականգնվել է: Ավետարանչության համար այն որպես կամուրջ է ծառայում: Այն արտացոլում է հավատացյալի նոր ընտանիքի հատկանիշները և ցույց է տալիս, թե ով է մեր ճշմարիտ Հայրը՝ Աստված:

Աստվածաշնչյան փրկությունը ձրի պարզև է, որի պտուղը պետք է լինի նոր և տարբերվող կյանքը (տես՝ Եփես. 2:8-9,10):

❖ **«աճելով Աստծո գիտությամբ»** Սա երկրորդ ներկա ժամանակի դերբայն է: Սա չափազանց բարդ տերմին է փորձառական գիտության (*epignōskō*, տես՝ Կող. 1:9,10; 3:10; Եփես. 1:17; 4:13) համար: Հավատացյալները պետք է շարունակեն հասկանալ՝ ճանաչել ավետարանի նշանակությունը և շարունակեն ապրել ավետարանի խրատներով:

1:11 «ամենայն գորությամբ զորացած» Սա երրորդ ներկա ժամանակի դերբայն է, որը նշանակում է «ամբողջ գորությունը ձեր մեջ գործելով»: Փրկության պես Քրիստոնեական կյանքը գերբնական պարզև է, ոչ թե ինքնուրույն կերպով, լարված մարդկային ջանքեր կամ նվիրում (տես՝ Գաղ. 3:13): Հավատացյալները պետք է հնազանդվեն Հոգուն, որպեսզի ունենան ազդեցիկ, աստվածահաճո կյանքեր (տես՝ Եփես. 5:18): Այս տերմինը մշտապես կիրառվում է գերբնական գորության համար (տես՝ Եփես. 1:19; Փիլ. 4:13):

❖ **«Իր փառքի գորության համեմատ»** Այս արտահայտությունը նկարագրում է, թե ինչպես պետք է հավատացյալները «գորանան ամենայն գորությամբ»: Նրանք պետք է զիջեն Աստծո Հոգուն, իսկ էներգիան, գորությունը և փառքը Նրանն է:

❖ **«երկայնամտություն և համբերություն»** Հնարավոր է մտածեք, թե արդյո՞ք այս բառերը չեն օգտագործվել որպես հոմանիշներ: Դրանք թեթևակի տարբերություն ունենին: Երկայնամտությունը (*hypomonē*) նշանակում էր համբերատար դիմացկունություն և հարատևություն, մինչև համբերությունը (*makrothumia*) նշանակում էր չարիքի կամ չարչարանքի համբերատար դիմացկունություն՝ տոկունություն: Դրանք հաճախ էր Պողոսը կիրառում որպես հանդիմանություն՝ հորդոր (տես՝ 2 Կորնթ. 6:4,6; 2 Տիմ. 3:10): Հավատացյալները կարող են այդպիսին լինել միայն Աստծո գորությամբ: Այս տերմինները հաճ կիրառվում էին նկարագրելու, թե ինչպես էր Աստված վարվում ընկած մարդկության հետ (տես՝ Հռոմ. 2:4; 9:22; 1 Կորնթ. 6:6) և թե ինչպես պետք է վարվեն փրկված մարդիկ մեկը մյուսի հանդեպ (տես՝ Գաղ. 5:22-23; Եփես. 4:2; Կող. 3:12):

❖ **«ուրախությամբ»** Սա քերականորեն կարող է կապված լինել Կող. 1:11 (NKJV) կամ Կող. 1:12-ի (NASB, NRSV, TEV, NJB) հետ:

1:12 «գոհանալով» Սա Կող. 1:10-12-ում առկա ներկա ժամանակի չորս դերբայներից վերջինն է, որը նկարագրում է արժանի քայլելը մշտակ գոհության կյանք: Գոհությունը բնորոշ է Սուրբ Հոգով լեցուն կյանքին (տես՝ Կող. 3:17; Եփես. 5:20; 1 Թեսաղ. 5:18):

❖ **«Հորից»** Քրիստոնյաներին պետք է մշտապես հիշեցնել, որ Որդու ծառայության վրա ՆԿ-յան շեժտադրությունը չպետք է նվազեցնի նրանց կողմից Հայր Աստծուն փառաբանելը: Նա է այն

Միակը, որի բնավորությունն ու շնորհքը դրսևորվում են Հիսուսի մեջ: Նա էր Որդուն Ուղարկողն ու Պահապանը (տես՝ Եփես. 1:3-14 և 15-23):

Գոյություն ունեն այս արտահայտության մի քանի հունարեն ձեռագրային տարբերակներ: Այդուհանդերձ այս գրքին սատարում են հունարեն հնագույն ձեռագրերը՝ P⁶¹, A, C, D, K և P, ինչպես նաև լատիներեն Վուլգատա թարգմանությունը: UBS⁴-ը գնահատում է «B» (գրեթե վստահելի): Այս տարբերակները, ինչպես որ հաճախ է լինում, չեն ազդում տեքստի նշանակության, ճշմարտության կամ արժանահավատության վրա: Վաղ շրջանի դպիրները փորձում էին իրենց կրկնօրինակած տեքստերն ավելի պարզ դարձնել: Տե՛ս Հավելված Երկու:

NASB, NKJV	«որակավորեց»
NRSV	«ի վիճակի դարձրեց»
TEV	«արժանացրեց»
NJB	«ի գորու դարձրեց»

Այս տերմինը միայն այստեղ և 2 Կորնթ. 3:5-6-ում է կիրառվում (աժականը կիրառվում է 2 Կորնթ. 2:16; 3:5 և 2 Տիմ. 2:2-ում): Աստված մեզ որակավորել՝ արժանացրել է (1) հռչակելով մեզ արդար՝ Քրիստոսում (արդարացումը և սրբացումը համաձայն մեր դիրքի) և (2) մեր մեջ Քրիստոսակերպությունը կատարելագործելով (աճող սրբությունը): Տե՛ս Հատուկ Թեմա. Սրբագործում, Եփես. 1:1-ում:

❖ **«մեզ»** Հնագույն հունարեն տեքստերը հավասարապես բաժանված են «մեզ» (NASB, NKJV) և «ձեզ» (NRSV, TEV, NJB) դերանունների միջև: UBS⁴-ը գնահատում է «ձեզ» դերանունը «B» (գրեթե վստահելի): «Ձեզ»-ը հնարավոր է այստեղ գրված լինի կրկնօրինակողի կողմից, որպեսզի համապատասխանի Կող. 1:13-ին:

❖ **«մասնակից լինելու վիճակին /անգլ.՝ ժառանգությանը/»** Ժառանգությունն այստեղ բառացի «վիճակ» տերմինն է: ՀԿ-ում Աստված խոստացել էր Աբրահամին մի երկիր և սերունդ (տես՝ Ծննդ. 12:12): ՀԿ-ը կենտրոնանում է երկրի վրա, ՆԿ-ը՝ սերնդի: ՀԿ-ում Պաղեստինի երկիրը տրվում է որպես ցեղային ժառանգություն Հակոբի բոլոր որդիներին (տես՝ Հեսու 12-19), բացի Ղևտացիներից, քանի որ նրանք ծառայում էին Աստծուն իրենց բացառիկ դիրքով (տես՝ Թվոց 4:45): Աստված Ինքն էր ասել, որ լինելու է նրանց բաժինը՝ ժառանգությունը (տես՝ Թվոց 18:24): Ինչ-որ իմաստով ՀԿ-յան Աստծո բոլոր մարդիկ հանդիսանում էին քահանաներ (Ել. 19:4-6): Նրանք քահանայական թագավորություն էին, որպեսզի ամբողջ աշխարհին բերեին Աստծուն: Աստծո ՆԿ-յան ժողովրդի հետ խոսվում է ՀԿ-յան տերմիններով, որպես քահանաների (1 Պետ. 2:5,9; Հայտն. 1:6): Ինչպես որ Ղևտացիների ժառանգությունն էր Աստված, այնպես էլ հիմա բոլոր ՆԿ-յան հավատացյալների ժառանգությունն է (տես՝ Գործք 20:32; Հռոմ. 8:17; Գաղ. 4:7):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱՑՅԱԼԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ (1 Պետրոս 1-ից)
SPECIAL TOPIC: BELIEVERS' INHERITANCE (from 1 Peter 1)

ՀԿ-ում բացի Ղևտի ցեղից բոլոր ցեղերը որպես ժառանգություն ստացան հողատարածք (տես՝ Հեսու 14-22): Ղևտացիները, որպես քահանաների ցեղ, տաճարի սպասավորներ և տեղական վարդապետներ, համարվում էին որպես հենց ՅԱՀՎԵին իրենց ժառանգությունը ունեցողներ (տես՝ Մաղմ. 16:5; 73:23-26; 119:57; 142:5; Ողբ 3:24): ՆԿ-ը գրողները հաճախ վերցնում էին Ղևտացիների իրավունքները և առանձնաշնորհումները և դրանք կիրարկում բոլոր հավատացյալների համար: Մա նրանց կողմից կիրառվող կերպ էր պնդելու, որ Հիսուսի հետևորդներն են Աստծո իրական ժողովուրդը և հիմա բոլոր հավատացյալները կանչված են ծառայելու որպես Աստծո քահանաներ (տես՝ 1 Պետ. 2:5,9; Հայտն. 1:6), ինչպես որ ՀԿ-ը պնդում է Իսրայելի համար (տես՝ Ելից 19:4-6): ՆԿ-ը չի շեշտադրում որևէ քահանայի իր յուրահատուկ պարտավորություններով, այլ շեշտում է այն ճշմարտությունը, որ բոլոր հավատացյալներն են քահանաներ, որը պահանջում է միասնական ծառայողական վերաբերմունք (տես՝ 1 Կորնթ. 12:7): ՆԿ-յան Աստծո ժողովրդին տրվել էր ՀԿ-ի համաշխարհային ավետարանչության առաջադրանքը (տես՝ Ծննդ.

12:3; Ելից 19:5բ; Մատթ. 28:18-20; Ղուկ. 24:46-47; Գործք 1:8; տե՛ս Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ Հավիտենական Փրկագործության Ծրագիրը:

Սա Հիսուսի կողմից տրված գաղափար է, որպես ստեղծագործության սեփականատեր, քանի որ ստեղծագործության ժամանակ Նա էր Հոր գործակալը՝ կատարողը (տես՝ Հովհ. 1:3,10; 1 Կորնթ. 8:6; Կող . 1:16; Եբր. 1:2-3): Մենք ժառանգակիցներ ենք, քանի որ Նա է ժառանգորդը (տես՝ Հռոմ . 8:17; Գաղ . 4:7; Կող . 3:24): Սուրբ Գիրքն ասում է, որ հավատացյալները ժառանգելու են (տես՝ Գործք 20:32; 26:18; Եփես . 1:4; Կող . 1:12; 3:24) շատ բաներ՝ Հիսուսի հետ իրենց ընտանեկան կապի շնորհիվ, Ով ամեն ինչի ժառանգորդն է (տես՝ Եբր. 1:2): Ուստի, նրանք հետևյալ բաների ժառանգակիցներն են (տես՝ Հռոմ . 8:17; Գաղ . 4:7)՝

1. Թագավորության (տես՝ Մատթ. 25:34; 1 Կորնթ. 6:9-10; 15:50; Եփես . 5:5)
2. Հավիտենական կյանքի (տես՝ Մատթ. 19:29; Եբր. 9:15)
3. Աստծո խոստումների (տես՝ Եբր. 6:12)
4. Ըստ Աստծո խոստումների Նրա պահպանության (տես՝ 1 Պետ. 1:4-5):

❖ **«սրբերի»** Տե՛ս Հատուկ Թեմա համար 2-ում:

❖ **«լույսի մեջ»** Սա կա՛մ (1) էթիկական սահմանում է (տես՝ Հովհ. 3:19) կա՛մ էլ (2) Քրիստոսաւերպության վերաբերյալ սահմանում՝ ի հակադրություն դիվականի (տես՝ Եփես . 6:12; Գործք 26:18):

1:13-14 Այս համարները հանդիսանում են որպես Կող . 1:15-20-ի հիասքանչ Քրիստոսաբանական դավանության անցում: Այն նկարագրում է, թե ինչ է արել հավատացյալների համար Հայր Աստվածը Որդու միջոցով:

1:13 «/Նա/ մեզ ազատեց» Դերանունը վերաբերում է Հորը: Այս անորոշ կատարյալ (դեպոնենտ) սահմանական եղանակը կիրառված է փրկվածի իմաստով (NRSV, TEV, NJB):

❖ **«խավարի իշխանությունից /անզլ.՝ տիրակալությունից/»** Բառացի սա «խավարի իշխանությունից» (*exousia*) է (տես՝ Կող . 1:12; Ղուկ . 22:53): NJB թարգմանությունը տալիս է «խավարի իշխող ուժը»: Հուդայականության մեջ և Մեռյալ Ծովի Գալարներում հաճախ են կիրառվում լույսն ու խավարը, նկարագրելու բարու և չարի երկու հոգևոր տիրակալությունները (տես՝ Հովհ . 3:19-21): Պողոսը Կողոսացիներում այս տերմինը մի քանի անգամ օգտագործում է (տես՝ Կող . 1:13, 16; 2:10, 15):

❖ **«փոխադրեց»** Սա բառացի նշանակում է «վերաբնակեցրեց» կամ «վերատեղակայեց»: Երկու բայերն էլ այս համարում անորոշ կատարյալ են: Աստված արդեն իսկ այս բաներն արել է հավատացյալների համար:

❖ **«թագավորություն»** Հիսուսն այս գաղափարը օգտագործեց որպես ներկայի իրականություն ապագայի վախճանով: Համատեքստը շեշտադրում է, թե արդեն իսկ հավատացյալներն ինչ ունեն Քրիստոսի մեջ (տես՝ Եփես . 2:5-6): Տե՛ս Հատուկ Թեմա . Աստծո Թագավորությունը, Եփես . 5:5-ում:

Պողոսը հաճախ չէր օգտագործում հենց Հիսուսի «Աստծո Թագավորությունը» արտահայտությունը, քանի որ հեթանոսները չէին հասկանա այդ հրեական հասկացությունը:

❖ **«Իր Միբեղի Որդու»** Հայր Աստվածն այս տիտղոսը՝ անունը տվեց Հիսուսին Նրա մկրտության և այլակերպության ժամանակ (տես՝ Մատթ. 3:17; 17:5): Հիսուսն այն յուրահատուկ Որդին է (*monogenēs*, տե՛ս Հովհ . 1:18; 3:16, 18; 1 Հովհ . 4:9): Հավատացյալները Նրա միջոցով են որդիներ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՈՐՂԻՆ
SPECIAL TOPIC: THE SON OF GOD

Սա ՆԿ-ում Հիսուսին տրված ամենակարևոր անուններից է: Անշուշտ այն ունի աստվածաբանական նշանակություն: Այն Հիսուսին ներկայացնում է որպես «Որդին» կամ «Իմ Որդին», իսկ Աստծուն դիմում է որպես «Հայր» (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ): ՆԿ-ում այն հանդիպում է ավելի քան 124 անգամ: Նույնիսկ, երբ Հիսուսն է Ինքն իրեն անվանում «Մարդու Որդի» Դանիել 7:13-14 հատվածից, սա ևս ունի աստվածաբանական նշանակություն:

ՀԿ-յան հասկացությամբ «որդի» բառը կարող է վերաբերել չորս հատուկ խմբերի (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. . . ՈՐՂԻՆՆԵՐԸ (ՀԿ))՝

1. հրեշտակներին (սովորաբար ՀՈԳՆԱԿԻ թվով, տես՝ Ծննդ.6:2; Հոր 1:6; 2:1)
2. Իսրայելի Թագավորը (տես՝ 2 Թագ.7:14; Սաղմ.2:7; 89:26-27)
3. Իսրայելի հավաքական ազգին (տես՝ Ելից 4:22-23; 2 Օր.14:1; Ովս.11:1; Մաղ.2:10)
4. Իսրայելի դատավորներին (տես՝ Սաղմ.82:6)

Երկրորդ կիրառությունն է, որ կապ ունի Հիսուսի հետ: Այս կերպով «Դավթի որդի» և «Աստծո որդի» երկու արտահայտություններն էլ կապված են 2 Թագավորաց 7; Սաղմոս 2 և 89-ի հետ:

ՀԿ-ում «Աստծո որդին» երբեք չի օգտագործվել հատուկ Մեսիայի համար, բացառությամբ որպես էսկատոլոգիական՝ գալիք թագավորի համար, որպես Իսրայելի «օժված պաշտոններից» մեկը: Այնուամենայնիվ Մեռյալ Ծովի Գալարներում այս տիտղոսը Մեսիական նշանակությամբ շատ տարածված է (տես՝ հատուկ մեջբերումներ *Հիսուսի և Ավետարանների վերաբերյալ Բառարանում /Dictionary of Jesus and the Gospels/*, էջ՝ 770): Նաև «Աստծո Որդի» տիտղոսը հանդիսանում է Մեսիական տիտղոս երկու հրեական միջաստվածաշնչային հայտնության աշխատություններում (տես՝ 2 Եզրաս 7:28; 13:32,37,52; 14:9 և 1 Ենովք 105:2):

Այս խոսքի ՆԿ-յան հիմքը, որը վերաբերում է Հիսուսին, լավագույնս ամփոփվում է մի քանի կատեգորիաներով՝

1. Նրա մշտագոյության՝ նախքան արարումը գոյություն ունենալը (տես՝ Հովհ.1:1-18)
2. Նրա բացառիկ (կուսական) ծնունդը (տես՝ Մատթ.1:23; Դուկ.1:31-35)
3. Նրա մկրտությունը (տես՝ Մատթ.3:17; Մարկ.1:11; Դուկ.3:22: Աստծո ձայնը երկնքից միանում է Սաղմոս 2-ի թագավորին Եսայի 53-ի չարչարվող ծառայի հետ միասին):
4. Սատանայի կողմից Նրա փորձությունը (տես՝ Մատթ.4:1-11; Մարկ.1:12,13; Դուկ.4:1-13: Նա փորձվում է, որպեսզի կասկածի տակ առնի Իր որդի լինելու փաստը, որ գուցե այդպիսով իր նպատակը կիրականացնեք մեկ այլ ճանապարհով՝ առանց խաչի):
5. Անընդունելի խոստովանողների կողմից Նրա մասին հաստատություններ՝
 - ա. դևերը (տես՝ Մարկ.1:23-25; Դուկ.4:31-37,41; Մարկ.3:11-12; 5:7, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԻՎԱԿԱՆԸ [ալիքոճ ոգիները] ՆԿ-ում)
 - բ. անհավատները (տես՝ Մատթ.27:43; Մարկ.14:61; Հովհ.19:7)
6. Իր աշակերտների կողմից հաստատությունն Իր մասին.
 - ա. Մատթ.14:33; 16:16
 - բ. Հովհ.1:34,49; 6:69; 11:27
7. Իր կողմից հաստատությունը.
 - ա. Մատթ.11:25-27
 - բ. Հովհ.10:36
8. Աստծո մասին Իր կողմից որպես Հոր՝ ընտանեկան փոխաբերության կիրառությունը.
 - ա. Աստծո համար «Աբբա» բառի կիրառությունը Իր կողմից
 - 1) Մարկ.14:36
 - 2) Հռոմ.8:15
 - 3) Գաղ.4:6
 - բ. Պարբերաբար Իր կողմից օգտագործվող Հայր (*patēr*) բառը՝ նկարագրելու աստվածության հետ Իր փոխհարաբերությունը:

Որպես ամփոփում, «Աստծո Որդի» տիտղոսը աստվածաբանական մեծ նշանակություն էր ներկայացնում իրենից այն մարդկանց համար, ովքեր ՀԿ-ը և դրա խոստումներն ու կատեգորիաները լավ գիտեին, սակայն ՆԿ-ի գրողները անհանգստանում էին տեսնելով այս տիտղոսի կիրառությունը հեթանոսների մեջ, քանի որ համաձայն նրանց հեթանոսական հավատամքի հիմքի «աստվածները» ամուսնանում էին կանանց հետ, որոնցից սերվում էին ժառանգներ՝ «հսկաներ» կամ «տիտաններ»:

1:14 «Ում մեջ ունենք» Սա ներկա ժամանակի ներգործական հոլովի սահմանական եղանակ է: Քրիստոսում հավատացյալներն ունեն և շարունակում են ունենալ Աստծո ընտանիքի օրինությունները:

❖ «փրկագնություն» Հնարավոր է սա ակնարկում է ՀԿ-յան այս տերմինները (*paduh*, «ազատել կամ փրկել» և *gaal*, «բարեկամի միջնորդությամբ ազատել» [*go'el*]): Հիսուսը մեզ ստրկությունից հետ գնեց (տես՝ Եսայի 53:11-12, Մարկ. 10:45; Եփես. 1:7): Փրկագնումը՝ փրկությունը ներկայիս իրողություն է (տես՝ Եփես. 1:7) և ապագայի վախճանով՝ վերջաբանով (տես՝ Եփես. 4:30):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳՆՈՒԹՅԱՆ/ՓՐԿԱԳՆԵԼ SPECIAL TOPIC: RANSOM/REDEEM

I. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. Հիմնականում Եբրայերենում կան երկու օրինական տերմիններ, որոնք փոխանցում են այս հասկացությունը:

1. *Ga'al* (BDB 145 I, KB 169 I), որը սովորաբար նշանակում է «վճարված գնի միջոցով ազատել»: *go'el* տերմինի մի ձևը հավելում է այս հասկացությանը անձնական միջնորդության նշանակություն, սովորաբար ընտանիքի անդամի կողմից (այսինքն՝ հարազատ՝ բարեկամ փրկագնող): Առարկաներ, կենդանիներ, հողատարածք կամ բարեկամներ (տես՝ Հռութ 4:14; Եսայի 29:22) ետ գնելու իրավունքի մշակութային այս գործառույթը (տես՝ Ղևտացիների 25,27) աստվածաբանորեն փոխանցված է ՅԱՀՎԵի կողմից՝ Իսրայելին Եգիպտոսի ազատագրումից (տես՝ Ելից 6:6; 15:13; Մաղմ. 74:2; 77:15; Երեմ. 31:11): Նա դառնում է «Փրկիչը» (տես՝ Հոր 19:25; Մաղմ. 19:14; 78:35; Առակ. 23:11; Եսայի 41:14; 43:14; 44:6,24; 47:4; 48:17; 49:7,26; 54:5,8; 59:20; 60:16; 63:16; Երեմ. 50:34):
2. *Padah* (BDB 804, KB 911), որը հիմնականում նշանակում է «ազատել» կամ «փրկել»:
 - ա. առաջնեկների ազատումը (Ելից 13:13-15 և Թվոց 18:15-17)
 - բ. ֆիզիկական ազատագրումը՝ հակադրված հոգևոր ազատագրման հետ (Մաղմ. 49:7, 8,15)
 - գ. ՅԱՀՎԵն փրկելու է Իսրայելին իրենց մեղքից և ապստամբությունից (Մաղմ. 130:7-8)

Բ. Աստվածաբանական հասկացությունը ներառում է մի քանի փոխկապակցված երևույթներ.

1. Առկա է կարիքը, կապանքը, զրկանքը, բանտարկությունը:
 - ա. ֆիզիկական
 - բ. սոցիալական
 - գ. հոգևոր (տես՝ Մաղմ. 130:8)
2. Ազատության, ազատ արձակման և վերականգնման համար պետք է գին վճարվի՝
 - ա. Իսրայել ազգի համար (տես՝ 2 Օր. 7:8)
 - բ. անհատի համար (տես՝ Հոր 19:25-27; 33:28; Եսայի 53)
3. Ինչ-որ մեկը պետք է գործի որպես միջնորդ և օգնական: *ga'al* տերմինում այս մեկը սովորաբար ընտանիքի որևէ անդամ է կամ մտերիմ բարեկամ (այսինքն՝ *go'el*, BDB 145):
4. ՅԱՀՎԵն հաճախ Իրեն բնութագրում է ընտանեկան տերմիններով.
 - ա. Հայր
 - բ. Ամուսին

գ. Մտերիմ Բարեկամ Փրկիչ/ Վրեժխնդրության փրկագնումը ապահովվեց ՅԱՀՎԵԻ անձնական ներգրավվածությամբ, զինը վճարվեց և փրկությունը իրականություն դարձավ:

II. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. Գոյություն ունեն մի քանի տերմիններ, որոնք փոխանցում են աստվածաբանական նշանակությունը:

1. *Agorazō* (տես՝ 1 Կորնթ. 6:20; 7:23; 2 Պետ. 2:1; Հայտն. 5:9; 14:3-4): Մա առևտրային տերմին է, որն արտահայտում է ինչ-որ բանի համար վճարված գին: Մենք արյամբ գնված ժողովուրդ ենք, և այլևս ինքներս մեր կյանքը չենք վերահսկում: Մենք պատկանում ենք Քրիստոսին:
2. *Exagorazō* (տես՝ Գաղ. 3:13; 4:5; Եփես. 5:16; Կող. 4:5): Մա նույնպես առևտրային տերմին է: Այն արտացոլում է մեզ համար Հիսուսի փոխանորդական մահը: Հիսուսը կրեց գործերով հիմնավորված օրենքի «անեծքը» (այսինքն՝ Մովսիսական Օրենքի, տես՝ Եփես. 2:14-16; Կող. 2:14), որոնք մեղավոր մարդիկ չկարողացան կատարել: Նա կրեց անեծքը (տես՝ 2 Օր. 21:23) մեր բոլորի համար (տես՝ Մարկ. 10:45; 2 Կորնթ. 5:21): Հիսուսով Աստծո արդարությունը և սերը հասնում են կատարյալ ներման, ընդունելության և մուտքի իրավունքի:

3. *Luō*, «ազատել»

ա. *Lutron*, «վճարված գին» (տես՝ Մատթ. 20:28; Մարկ. 10:45): Մրանք հզոր խոսքեր են, որ հնչել են Հիսուսի բերանից Իր գալստյան նպատակի մասին՝ աշխարհի Փրկիչը լինելու, վճարելով մեղքի պարտքը, որն Իրենը չէր (տես՝ Հովհ. 1:29):

բ. *Lutroō*, «ազատ արձակել»

(1) Փրկել Իսրայելը, Դուկաս 24:21

(2) Իր անձը տալ, որպեսզի ազատի և մաքրի մի ամբողջ ժողովրդի, Տիտոս 2:14

(3) Անմեղ փոխանորդ լինել, 1 Պետ. 1:18-19

գ. *Lutrosis*, «փրկագնում», «ազատագրում» կամ «ազատություն տալ»

(1) Չաքարիայի մարգարեությունը Հիսուսի մասին, Դուկաս 1:68

(2) Աննայի փառաբանությունն Աստծուն Հիսուսի համար, Դուկաս 2:38

(3) Հիսուսի ավելի լավ և մեկ անգամ մատուցած զոհը, Եբր. 9:12

4. *Apolytrōsis*

ա. փրկություն Երկրորդ գալստյան ժամանակ (տես՝ Գործք 3:19-21)

(1) Դուկաս 21:28

(2) Հռոմեացիների 8:23

(3) Եփեսացիների 1:14; 4:30

(4) Եբրայեցիների 9:15

բ. Փրկությունը Քրիստոսի մահվան մեջ

(1) Հռոմեացիների 3:24

(2) 1 Կորնթացիների 1:30

(3) Եփեսացիների 1:7

(4) Կողոսացիների 1:14

5. *Antilytron* (տես՝ 1 Տիմ. 2:6): Մա շատ կարևոր տերմին է (ինչպես և Տիտոս 2:14), որը կապում է ազատագրումը խաչի վրա Հիսուսի փոխանորդական մահվան հետ: Նա է միակ և անկրկնելի ընդունելի զոհը, Մեկը, որ մահացավ «բոլորի» համար (տես՝ Հովհ. 1:29; 3:16-17; 4:42; 1 Տիմ. 2:4; 4:10; Տիտոս 2:11; 2 Պետ. 3:9; 1 Հովհ. 2:2; 4:14):

Բ. Աստվածաբանական հասկացությունը ՆԿ-ում:

1. Մարդկությունը գերի է դարձել մեղքին (տես՝ Հովհ. 8:34; Հռոմ. 3:10-18; 6:23):

2. Մարդկության մեղքի կապանքը բացահայտվեց ՀԿ-յան Մովսիսական Օրենքի (տես՝ Գաղատացիների 3) և Հիսուսի Լեռան Քարոզի միջոցով (տես՝ Մատթեոս 5-7):

Մարդկային գործերը դարձան մահվան դատավճիռ (տես՝ Կող. 2:14):

3. Հիսուսը՝ Աստծո անմեղ Գառը, եկել է և մահացել մեր փոխարեն (տես՝ Մարկ. 10:45; Հովհ. 1:29; 2 Կորնթ. 5:21): Մենք գնվել ենք մեղքից, որպեսզի ծառայենք Աստծուն (տես՝ Հռոմեացիների 6):

4. ՅԱՀՎԵԻՆ և Հիսուսին նշելով որպես «մտերիմ բարեկամ», որոնք գործում են մեզ համար: Սա շարունակում է ընտանեկան տերմիններով ներկայացված փոխաբերությունները (այսինքն՝ հայր, ամուսին, որդի, եղբայր, բարեկամ):
5. Փրկությունը՝ փրկագնումը, Մատանային վճարված գին չէր (այսինքն՝ Միջնադարյան աստվածաբանություն), այլ Քրիստոսի մեջ Աստծո խոսքի և Աստծո արդարության հաշտությունը Աստծո սիրո և կատարյալ հոգածության հետ: Իսաչի վրա վերականգնվեց խաղաղությունը, մարդկության ապստամբությունը ներվեց, Աստծո պատկերը մարդկանց մեջ հիմա նորից լիարժեք գործում է մտերմիկ փոխհարաբերությամբ:
6. Մինչդեռ գոյություն ունի փրկության ապառնի տեսքը (տես՝ Հռոմ . 8:23; Եփես . 1:14; 4:30), որը ներառում է մեր հարուցյալ մարմինները և անձնական մտերմությունը Երրորդության Աստծո հետ (տես՝ Հատուկ Թեմա . Երրորդություն): Մեր հարուցյալ մարմինները լինելու են Նրա մարմնի պես (տես՝ 1 Հովհ . 3:2): Նա ուներ ֆիզիկական մարմին, սակայն հավելյալ տարածաչափական տեսքով: Դժվար է սահմանել 1 Կորնթ . 15:12-19-ի պարադոքսը 1 Կորնթ . 15:35-59-ի հետ: Ըստ երևույթին գոյություն ունի ֆիզիկական, երկրավոր մարմին և լինելու է երկնավոր, հոգևոր մարմին: Հիսուսը երկուսն էլ ուներ:

❖ **«մեղքերի թողություն»** Գոյություն են ունեցել մի քանի հունարեն տերմիններ «թողություն՝ ներում» բառի համար: Տվյալ բառը՝ (*aphesis*) նշանակում էր «հեռացնել», որը Քավության Օրվա ծիսակարգի ակնարկ էր (տես՝ Ղևտացիների 16): Քավության նոխազը խորհրդապատկերորեն հեռացնում էր մարդկանց մեղքերը:

Իրենեոսի *Հերձվածողներ* 1:21:2-ից իմանում ենք, որ որոշ գնոստիկ ուսուցիչներ առանձնացնում էին փրկագնումը թողությունից ըստ ժամանակի և հասունության գործոնի: Հնարավոր է, որ Պողոսը անդրադառնում էր այս կեղծիքին:

Քինգ Չեմս տարբերակը ավելացնում է «Նրա արյամբ» արտահայտությունը, որը հետագայում դալիորներն են ավելացրել Եփես . 1:7-ի համազոր խոսքից:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱԳՑԻՆԵՐԻ 1:15-20

¹⁵Նա աներևույթ Աստծո պատկերն է՝ բոլոր ստեղծվածների անդրանիկը: ¹⁶Որովհետև Նրանով ստեղծվեց ամեն բան, ինչ որ երկնքում է և ինչ որ երկրի վրա, տեսանելի և անտեսանելի, թե՛ գահերը, թե՛ տերությունները, թե՛ պետությունները, և թե՛ իշխանությունները. ամեն ինչ Նրանով և Նրա՝ համար ստեղծվեց. ¹⁷և Նա ամեն ինչից առաջ է, և ամեն ինչ Նրանով է հաստատ մնում: ¹⁸Եվ Նա մարմնի գլուխն է, եկեղեցու, Նա սկիզբն է, անդրանիկը՝ մեռելներից, որպեսզի Ինքը ամեն ինչում առաջնությունն ունենա: ¹⁹Որովհետև Աստված հանեց, որ Նրա մեջ բնակվի Աստվածության ամբողջ լիությունը, ²⁰և Նրանով ամեն ինչ հաշտեցնի Իր հետ՝ խաղաղություն անելով Իր խաչի վրա թափած արյան միջոցով՝ երկրի վրա լինի, թե երկնքում:

1:15-20 Այս հիասքանչ բանաստեղծական հատվածը հնարավոր է արտացոլում է վաղ եկեղեցու օրհներգ կամ հավատո հանգանակ: Այն անդրադառնում է (1) Հիսուսի տիեզերական տիրակալությանը և (2) Նրա փրկագործությանը: Միևնույն երկակի առանձնահատկությունները կարելի է տեսնել Եբր . 1:2-3-ում: Այն արտացոլում է գնոստիկ մի քանի տերմիններ՝ «անդրանիկ», «լեցունություն» և Կող . 1:16-ի հրեշտակային մակարդակների (այսինքն՝ *աեռնների*) պես և Կող . 1:20-ում Հիսուսի իրական մարդեղության և մահվան վերաբերյալ գաղափարներ:

Ուշադրություն դարձրեք «բոլոր, ամեն» տերմինը կիրառված է յոթն անգամ (տես՝ Կող . 1:15,16 /երկու անգամ/, 17 /երկու անգամ/, 18, 20): Հիսուսի ծառայությունը ներառական է, ամեն ինչ որ կա՝ գոյություն ունի՝ Նրանից է:

1. Նրանով է ամեն ինչ արարվել
2. ամեն ինչ Նրա միջոցով է արարվել
3. Նա ամեն ինչից առաջ է
4. Նրանում է ամեն ինչ փոխկապակցված
5. Նա Ինքը գալու է ամեն ինչում առաջին տեղում լինելու
6. ամբողջ լեցունությունը Նրա մեջ է բնակվում
7. Նրա միջոցով հաշտեցնելու Իր հետ ամեն ինչ («Իր» դերանունը հավանաբար վերաբերում է Հորը):

Նկատե՛ք, թե որքան հաճախ է «Նրա» դերանունը ներկայացված տարբեր ածանցների հետ:

1. «Նրանում», Կող. 1:16, 17, 19
2. «Նրա միջոցով», Կող. 1:16,20
3. «դեպի Նա, Նրա մեջ», Կող. 1:16,20 (նկատեք, միևնույնը Եփես. 1:3-14-ում):

1:15 «Նա աներևույթ Աստծո պատկերն է» Միևնույն բառը (*eikōn*) կիրառված է Հիսուսի վերաբերյալ Կող. 3:10-ում և 2 Կորնթ. 4:4-ում: Նմանատիպ աստվածաբանական արտահայտության հանդիպում ենք Հովհ. 1:18, 14:9; Փիլ. 2:6; Եբր. 1:3-ում: Եբրայեցիների 1:3 հատվածը պարունակում է ավելի ցայտուն հունարեն տերմին (*charakter*, որը նշանակում է ճշգրիտ պատկերը՝ ներկայացուցիչը, տես՝ Ծննդ. 1:26-27; 5:1; 9:6; 1 Կորնթ. 11:7; Հակոբոս 3:9): Տեսնել Հիսուսին նույն է, թե տեսնել Աստծուն: Աներևույթ Աստվածը դարձել է երևացող՝ տեսանելի: Աստվածությունը դարձել է մարդ (տես՝ Հովհ. 14:9):

Հիսուսի ծառայությունն էր վերականգնել Աստծո պատկերը մարդկության մեջ: Այդ առումով Եդեմը վերականգնվեց Հիսուսի՝ Երկրորդ Ադամի միջոցով (տես՝ Հռոմ. 5:12-21; 1 Կորնթ. 15:20-28; Փիլ. 2:6): Նույնիսկ հնարավոր է, որ երկինքը կլինի վերականգնված Եդեմը:

1. Աստվածաշունչը սկսում է Աստծո, մարդկության և կենդանիների հետ (տես՝ Ծննդ. 1-2) և ավարտվում է Աստծո և մարդկության հետ, որոնք գտնվում են պարտեզում (ենթադրվում է կենդանիներով, տես՝ Հայտն. 21-22):
2. Եսայի 11:6-9 մարգարեությունը նկարագրում է նոր դարաշրջանում երեխաները և կենդանիները միասին
3. Նոր Երուսաղեմը իջնում է նորաստեղծ երկրի վրա (տես՝ 2 Պետ. 3:10-13; Հայտն. 21:2):

❖ **«բոլոր ստեղծվածների անդրանիկը»** Սա ՀԿ-յան այլաբանությունն էր Հիսուսի բացառիկ և մեծարված դիրքի համար՝

1. ռաբբիներն ասում էին, որ դա նշանակում էր գերակայություն (տես՝ Ելից 4:22)
2. ՀԿ-ում այս բառը օգտագործվում էր ավագ որդու համար՝ որպես ժառանգորդ և ընտանիքի տնտեսվարող
3. Սաղմ. 89:27-ում այն կիրառվում է Մեսիական իմաստով
4. Առակաց 8:22-ում այն վերագրված է Իմաստությանը, որպես Աստծո առաջին ստեղծագործություն և արաչագործության մեջ գործընկեր: Կարծում են համատեքստում #1 և #2 տարբերակներն իրար հետ լավագույնս են համապատասխանում:

Այս արտահայտությունը պետք չէ ընկալել այնպես, կարծես թե Հիսուսն է եղել առաջին ստեղծվածը (#4): Հնարավոր է, որ այս խոսքը գնոստիկ ուսուցիչների ձեռքում հաղթող խաղաքարտ էր, որոնք սովորեցնում էին, որ Հիսուսը բարձրյալ աստծո կողքին ամենաբարձր մակարդակի հրեշտակ էր: Այն պետք է մեկնաբանվի իր հրեական ՀԿ-յան միջավայրում: Հիսուսը աստվածության բացառիկ՝ միակ որդին էր (տես՝ Հովհ. 1:18; 3:16, 18; 1 Հովհ. 4:9), մինչդեռ Հիսուսը միշտ էլ Աստված է եղել (տես՝ Կող. 1:17; Հովհ. 1:1; 5:18; 10:30; 14:9; 20:28): Նա մարդացավ ժամանակի մեջ՝ Բեթլեհեմ քաղաքում, որպեսզի մեղավոր մարդկությունը կարողանար ընկալել և հասկանալ Աստծուն (տես՝ Հովհ. 1:14, 18):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆԴՐԱՆԻԿ
SPECIAL TOPIC: FIRSTBORN

Այս «անդրանիկ» (*prōtotokos*) բառը Աստվածաշնչում կիրառվում է մի քանի տարբեր իմաստներով:

1. Բառի ՀԿ-յան ծագումը վերաբերում է՝
 - ա. անդրանիկ զավակը պատկանում է ՅԱՀՎԵԻՆ (BDB 114, KB 131, տես՝ Ելից 13:2,12; 22:29; 34:19; Թվոց 3:13)
 - բ. ընտանիքում անդրանիկ զավակի նախապատվությանը (տես՝ 2 Օր. 21:17; Սաղմ. 89:27; Ղուկ. 2:7; Հռոմ. 8:29; Եբր. 11:28)

2. Բառի կիրառությունը Կող. 1:15-ում խոսում է Հիսուսի վերաբերյալ որպես առաջին ստեղծագործության, որը հնարավոր է լինի ՀԿ-յան մի մեջբերում Առակ. 8:22-31-ից կամ Աստծո գործակիցը՝ օգնականը, արարչագործության ժամանակ (տես՝ Հովհ. 1:3; 1 Կորնթ. 8:6; Կող. 1:15-16; Եբր. 1:2)
3. Բառի կիրառությունը Կող. 1:15,18; 1 Կորնթ. 15:20,23; Հայտն. 1:5-ում վերաբերում է մեռելներից անդրանիկը լինելուն
4. Բառի կիրառությունը ՀԿ-ում Մեսիայի անվան հետ կապված (տես՝ Սաղմ. 89:27; Եբր. 1:6; 12:23). սա մի անուն է, որը համախմբում է Հիսուսի առաջնահերթության և Նրա կենտրոնական դերի մի քանի ասպեկտները:

1:16 «Նրանով ստեղծվեց ամեն բան» Հիսուսը թե՛ երևացող և թե՛ աներևույթ, երկրային և երնային մթնոլորտների ստեղծագործության ժամանակ Աստծո գործընկերն էր (տես՝ Հովհ. 1:3, 10; Հռոմ. 11:36; 1 Կորնթ. 8:6; Եբր. 1:2; 2:10): Սա հերքում էր հոգու (Աստծո) և մատերիայի միջև հակասական փոխհարաբերության գնոստիկների ունեցած աշխարհայացքը: Հիսուսն է Իր խոսքով գոյության կանչել տիեզերքը (տես՝ Ծննդոց 1): Հիսուսն է, որ շիեց Ադամին և նրա մեջ կենդանության շունչը փչեց (տես՝ Ծննդոց 2):

«Ստեղծվեց» բայը Կող. 1:16-ում երկու անգամ է կիրառվում: Առաջինը անորոշ կատարյալ կրավորական սեռի սահմանական եղանակի է և երկրորդը՝ համարի վերջում (հունարենում) վաղակատար կրավորական սահմանական: Շեշտադրումն այն է, որ Հիսուսն է ստեղծագործության մեջ գործակալը, սակայն Հայրը՝ հիմնական պատճառը: Ստեղծագործությունը Հիսուսի մեջ (*en*) էր, Հիսուսի միջոցով (*dia*) էր և Հիսուսի համար (*eis*) էր:

❖ **«թե՛ գահերը, թե՛ տերությունները, թե՛ պետությունները և թե՛ իշխանությունները»** Որոշ ենթատեքստերում այս տերմինները հնարավոր է վերաբերեն երկրավոր կառավարությունների առաջնորդներին (տես՝ Հռոմեացիների 13), սակայն Կողոսացիների այս համատեքստում դրանք վերաբերում են սուտ վարդապետների հրեշտակային մակարդակներին (*aeons*, տես՝ Հռոմ. 8:38; 1 Կորնթ. 15:24; Եփես. 1:21; 3:10; 6:12; Կող. 1:16; 2:10,15; 1 Պետ. 3:22): Հնում մարդիկ աշխարհը դիտարկում էին ոչ միայն ֆիզիկական պատճառահետևանքային կապի մեջ, այլ նաև որպես հոգևոր տիրույթ: Տե՛ս Հատուկ Թեմա. Հրեշտակները Պողոսի Թղթերում, Եփես. 6:12-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԿԻՉԲ ARCHĒ
SPECIAL TOPIC: ARCHĒ

Հունարեն *archē* տերմինը նշանակում է «սկիզբ» կամ ինչ-որ բանի «ձագում»:

1. արարված կարգուկանոնի սկիզբը (տես՝ Հովհ. 1:1; Եբր. 1:10)
2. ավետարանի սկիզբը (տես՝ Մարկ. 1:1; Փիլ. 4:15; 2 Թեսաղ. 2:13; Եբր. 2:3; 1 Հովհ. 1:1)
3. առաջին ականատեսները (տես՝ Ղուկ. 1:2)
4. սկզբնական նշանները (հրաշքները, տես՝ Հովհ. 2:11)
5. սկզբնական սկզբունքները (տես՝ Եբր. 5:12)
6. սկզբնական վստահությունը՝ ավետարանի ճշմարտությունների հիման վրա (տես՝ Եբր. 3:14)
7. սկիզբը, Կող. 1:18; Հայտն. 3:14

Այն սկսվեց կիրառվել «կառավարել» կամ «իշխանություն»

1. մարդկային կառավարման պաշտոնյաների համար
 - ա. Ղուկաս 12:11
 - բ. Ղուկաս 20:20
 - գ. Հռոմ. 13:13; Տիտոս 3:1

2. հրեշտակային իշխանության համար
 ա. Հռոմ. 8:38
 բ. 1 Կորնթ. 15:24
 գ. Եփես. 1:21; 3:10; 6:12
 դ. Կող. 1:16; 2:10,15
 ե. Հուդա 1:6

❖ **«և Նրա համար»** Հիսուսը ոչ միայն Հայր Աստծո գործակալն էր ստեղծագործության ժամանակ, այլ նաև ստեղծագործության նպատակը (տես՝ Հռոմ. 11:36; Եբր. 2:10):

1:17 «և Նա ամեն ինչից առաջ է» Չի եղել մի այնպիսի ժամանակ, որ Հիսուսը չլիներ: Հիսուսը նախագոյ Աստված է (տես՝ Հովհ. 1:1-2; 8:58; 17:5, 24; 2 Կորնթ. 8:9; Փիլ. 2:6-7; Կող. 1:17; Եբր. 10:5-7): Ուշադրություն դարձրե՛ք Կող. 1:17 և 18-ում «Նա» (*autos*) դերանվան ընդգծված կիրառությունը, «Նա, Ինքը ամեն ինչից առաջ է» և «Նա, Ինքը մարմնի գլուխն է»:

**NASB, NRSV, NJB
 NKJV
 TEV**

**«ամեն ինչ Նրանում է հաստատ մնում»
 «ամեն ինչ Նրանում է կայանում»
 «ամեն ինչ Նրա հետ միաբանության մեջ ունեն իրենց պատշաճ տեղը»**

Սա “*syn*” բառի վաղակատար ներգործական սահմանական եղանակն է բաղադրված «հաստատ մնալ» (*sunistēmi*) բառի հետ, որը ենթադրում է «շարունակել», «համբերել» կամ «գոյատևել»:

Սա մատակարարման վարդապետությունն է (տես՝ Եբր. 1:3) և անհատական բնույթի է: «Ամեն ինչ» խոսքը վերաբերում է ստեղծագործությանը՝ նյութական և հոգևոր: Հիսուսն է ամեն ինչի թե՛ արարիչը և թե՛ պահապանը: ՀԿ-ում այս գործառույթները նկարագրում են *Էրհիսի* (Աստծո) գործը:

1:18 «Նա մարմնի գլուխն է, եկեղեցու» Ինչպես որ Հիսուսը գերազանց է ստեղծագործության մեջ, այնպես էլ Եկեղեցուն: Սա վերաբերում է տիեզերական եկեղեցուն (տես՝ Եփես. 1:22-23; 4:15; 5:23; Կող. 1:18; 2:9): Հավատացյալները թե՛ անհատապես (տես՝ 1 Կորնթ. 6:19) և թե՛ հավաքական առումով (տես՝ 1 Կորնթ. 3:16) հանդիսանում են Քրիստոսի մարմինը (այսինքն՝ նոր տաճարը): Պողոսը հաճախ էր խոսում եկեղեցու մասին որպես Քրիստոսի մարմնի (տես՝ 1 Կորնթ. 12:12-27), սակայն միայն Եփեսացիների և Կողոսացիների թղթերում է ասվում, որ Հիսուսը մարմնի «Գլուխն» է: Իրականում Նա ամեն ինչի Գլուխն է, անգամ տերությունների և իշխանությունների (տես՝ Եփես. 1:22):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵԿԵՂԵՑԻ (EKKLESIA)
 SPECIAL TOPIC: CHURCH (EKKLESIA)**

Այս հունարեն տերմինը՝ *ekklesia*, բաղկացած է երկու բառից՝ «դուրս» և «կանչված» հետևաբար տերմինը ակնարկում է Աստծո կողմից դուրս կանչված մարդկանց: Վաղ եկեղեցին այս տերմինը վերցրեց աշխարհիկ կիրառությունից (տես՝ Գործք 19:32, 39, 41) և Սեպտուագինտայում Իսրայելի «համայնքի» համար այս տերմինի գործածության հիման վրա (*Qahal*, BDB 874, տես՝ Թվոց 16:3; 20:4): Նրանք կիրառում էին այս բառը իրենց համար որպես ՀԿ-ի Աստծո Ժողովրդի շարունակություն: Նրանք նոր Իսրայելն էին (տես՝ Հռոմ. 2:28-29; Գաղ. 6:16; 1 Պետ. 2:5,9; Հայտ. 1:6), աշխարհի մասշտաբով Աստծո առաքելության կատարողները (տես՝ Ծննդ. 3:15; 12:3; Ել. 19:5-6; Սաղթ. 28:18-20; Ղուկ. 24:46,47; Գործք 1:8, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀՎՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ) և Միլլարդ Էրիքսոնի *Քրիստոնեական Աստվածաբանություն*, 2րդ խմբագրություն, էջ՝ 1052-1053, «Եկեղեցին և Իսրայելը» /Millard Erickson, *Christian Theology*, 2^{ed}, pp. 1052-1053, “The Church and Israel”/:

Ավետարաններում և Գործքում այս տերմինը գործածվում է մի քանի իմաստով.

1. քաղաքի աշխարհիկ ժողովը՝ Գործք 19:32, 39, 41
2. Քրիստոսով Աստծո տիեզերական ժողովուրդը՝ Մատթ.16:18 և Եփեսացիներին (այսինքն՝ Եփես. 1:22-23, 3:10,21, 4:4, 5:23, 1 Կորնթ. 10:32, 11:22, 12:28, Կող. 1:18,24, Եբր. 12:23)
3. Քրիստոսով հավատացյալների տեղական համայնքը՝ Մատթ.18:17; Գործք 5:11 (այս համարներում Երուսաղեմի եկեղեցին), Գործք 13:1, Հռոմ. 16:5, 1 Կորնթ. 16:19, Կող. 4:15, Փիլիմոն հ. 2
4. Իսրայելի հավաքական ժողովուրդը՝ Գործք 7:38, Ստեփանոսի քարոզի մեջ
5. Աստծո ժողովուրդը ինչ-որ տարածաշրջանում՝ Գործք 8:3, Գաղ.1:2 (Հուդան կամ Պաղեստինը):

Եկեղեցին հավաքված մարդիկ են և ոչ թե կառույցը: Հարյուրավոր տարիներ շարունակ եկեղեցաշենքեր գոյություն չեն ունեցել: Հակոբոսում (ամենավաղ գրված գրքերից մեկը) եկեղեցին նշվում է "synagōgē" (ժողովք) տերմինով: Եկեղեցու համար այս տերմինը կիրառված է միայն Հակարոսի գրքում (տես՝ Հակ. 2:2; 5:14):

❖ **«Նա սկիզբն է»** Առաջին հայացքից թվում է, թե սա մեկ այլ ակնարկ է ստեղծագործությանը (տես՝ Ծննդոց 1), սակայն համատեքստը փոխվել է եկեղեցու թեմային: Այս միջավայրում «սկիզբ» տերմինը վերաբերում է հունարեն լեզվում ծագում կամ աղբյուր բառերին: Հիսուսը Աստծո նոր ժողովրդի՝ հրեայի ու հույնի, սարուկի և ազատի, տղամարդու և կնոջ (տես՝ Կող. 3:11; Գաղ. 3:28) Գլուխը կամ կյանքի աղբյուրն է: Նա է նոր Ադամը (տես՝ Հռոմ. 5:12-21): Նոր ռասայի՝ Քրիստոնյաների գլուխը (տես՝ Եփես. 2:11-3:13):

❖ **«անդրանիկը՝ մեռելներից»** Հարության վերաբերյալ հստակ ՆԿ-յան հատված է 1 Կորնթ. 15 գլուխը: Հիսուսը գերազանց է՝ «անդրանիկը կամ առաջնածինը» (տես Հատուկ Թեմա Կող. 1:15-ում) հարության մեջ, ինչպես որ ստեղծագործության մեջ էր (տես՝ Կող. 1:15; Հռոմ. 1:4; Հայտն. 1:5): Նրա հարությունը խոստում է և նշան, որ բոլոր հավատացյալները հարություն են առնելու:

1 Կորնթ. 15:20 և 23-ում Հիսուսը կոչվում է «առաջին պտուղ կամ անդրանիկը»: Մա ՀԿ-յան այլաբանության հոմանիշ է: Հիսուսը ամեն բնագավառում նախակարապետն է՝ առաջինը: Նա թե՛ «անդրանիկն» է (տես՝ Հայտն. 1:5) և թե՛ «առաջին պտուղը»:

❖ **«որպեսզի Ինքն ամեն ինչում առաջնություն ունենա»** Այս ամփոփիչ խոսքը նման է Եփես. 1:22-23-ին: Հայրը դարձրել է Որդուն գերագույնը և գերական ամեն ինչում (տես՝ 1 Կորնթ. 15:27-28):

1:19 Սա սկսում է «որովհետև» (*hoti*, պատճառի արտահայտող ենթանախադասություն) բառով: Այն ներկայացնում է Աստծո կամքը Մեսիայի համար, որն է (1) աստվածության լեցունությունը դրսևորված Նրա մեջ (տես՝ Կող. 1:19) և (2) Նրա միջոցով ամեն ինչի հետ հաշտությունը (տես՝ Կող. 1:20):

NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«որ Նրա մեջ բնակվի ամբողջ լիությունը»
«որ Նրա մեջ պետք է բնակվի ամբողջ լիությունը»
«Քանի որ Նրա մեջ է Աստծո ամբողջ լիությունը ապրում»
«որ Որդին Իր մեջ ունենա Աստծո լիակատար էությունը»
«ամբողջ լիությունը նրա մեջ գտնվի»

Սա «լի» (*plerōma*) բառի հետ կապված բառախաղ է, որը օգտագործում էին սուտ վարդապետները՝ նկարագրելու բարի բարձրյալ աստծո և մեղավոր մատերիայի միջև գտնվող հրեշտակային մակարդակները (տես՝ Կող. 2:9; Եփես. 1:23; 3:19; 4:13): Սա ցնցող խոսք է, որտեղ նկարագրվում է

Նազարեթից մի հյուսն, որը դավանանության համար մահապատժի ենթարկվեց: Տեսնել Հիսուսին նշանակում է տեսնել Աստծուն:

1:20 «և Նրանով ամեն ինչ հաշտեցնի» Տերմինը (տես՝ Կող. 1:22) նշանակում էր հատկապես անձերի միջև առկա «թշնամությունը խաղաղության փոխել»: Մեղքը պատճառ հանդիսացավ արարչի ու արարվածի միջև բաժանման: Աստված գործեց Քրիստոսով վերականգնելու այդ կապը (տես՝ Հռոմ. 5:18-19): Աստվածաբանական շեշտադրման նպատակով (տես՝ Կող. 1:22) սա կրկնակի բաղադրյալ բառ է (*apokatallassō*): Պողոսն այս նույն բառը կիրառեց Եփես. 2:16-ում, իսկ միևնույն արմատը՝ 2 Կորնթ. 5:18-20-ում:

❖ **«ամեն ինչ»** Մա վերաբերում է ամբողջ ստեղծագործությանը՝ երևացող և աներևույթ (տես՝ Հռոմ. 8:18բ; 1 Կորնթ. 15:27-28; Եփես. 1:22-23):

❖ **«Իր հետ»** Մա աստվածաբանորեն կարող է վերաբերել Հորը կամ Որդուն: Համատեքստը միակ ուղեցույցն է: Այստեղ Հայրը լավագույնս է համապատասխանում:

❖ **«խաղաղություն անելով Իր խաչի վրա թափված արյան միջոցով»** Մա վերաբերում էր Հիսուսի զոհաբերվող մահվանը (տես՝ Հռոմ. 5:9; Եփես. 1:7; 2:13,16): Հաշտեցումը տեղի ունեցավ թանկ գնով: Շեշտադրումն այստեղ հավանաբար Նրա մարդեղության (արյունը) վրա էր, ինչպես նաև Նրա փոխանորդական քավության վրա (զոհաբերություն, տես՝ Եսայի 53, 2 Կորնթ. 5:21): Մուտ վարդապետները հաստատում էին միայն Նրա աստվածությունը, սակայն ուրանում Նրա մարդեղությունն ու մահը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ (*eirēnē*) [ՆԿ]

SPECIAL TOPIC: PEACE (*eirēnē*) [NT]

Հունարեն այս տերմինը վերաբերում էր ընդհարման բացակայությանը, սակայն LXX թարգմանության մեջ այն սկսեց նշանակել ներքին խաղաղություն Աստծո հետ և մարդը մարդու հետ (այսինքն՝ Ղուկ. 2:14, 10:6): ՆԿ-ը ՀԿ-ի պես կիրառում է այն որպես ողջունի ձև՝ «Խաղաղություն ձեզ» (այսինքն՝ Ղուկ. 10:5, Հովհ. 20:19,21,26, Հռոմ. 1:7, Գաղ. 1:3) կամ «հաշտություն, գնաք խաղաղությամբ» (տես՝ Մարկ. 5:34, Ղուկ. 2:29, 7:50, 8:48, Հակ. 2:16):

Հունարեն այս տերմինը կիրառվում է «խաթարված փոխհարաբերություններն իրան կապելու» իմաստով (այսինքն՝ Հռոմ. 5:10-11): ՆԿ-ը խաղաղության մասին երեք հիմնական աստվածաբանական իմաստով է խոսում՝

1. օբյեկտիվ կողմը՝ մեր խաղաղությունն Աստծո հետ՝ Քրիստոսի միջոցով (տես՝ Հռոմ. 5:1, Կող. 1:20)
2. սուբյեկտիվ կողմը՝ Աստծո հետ մեր շիտակ լինելը (տես՝ Հովհ. 14:27, 16:33, Փիլ. 4:7)
3. այն, որ Աստված Քրիստոսի միջոցով մեկ մարմնի մեջ է միավորել հավատացյալ հրեային, և հեթանոսին (տես՝ Եփես. 2:14-17, Կող. 3:15): Քանի որ մենք Աստծո հետ խաղաղություն ունենք, ապա արդյունքը պետք է լինի ուրիշների հետ էլ խաղաղությունը: Ուղղահայացը պետք է դառնա հորիզոնական:

Նյումեն և Նիդա *Թարգմանչի ձեռնարկ Հռոմեացիներին ուղղված Պողոսի Նամակի համար*, էջ՝ 92, գրքում մի հետաքրքիր մեկնություն կա «խաղաղության» վերաբերյալ.

«Թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանում խաղաղություն տերմինն ունի իմաստային լայն սպեկտր: Հիմնականում այն նկարագրում է մարդու կյանքի ընդհանուր բարեկեցությունը. այն նույնիսկ որդեգրվել է հրեաների մեջ որպես ողջունի ձև (*shalom*): Այս տերմինն ունի

այնքան խորը իմաստ, որ նույնիսկ հրեան կարող է այն կիրառել Մեսիական փրկությունը նկարագրելու համար: Հաշվի առնելով այս փաստը, լինում են ժամանակներ, երբ այն կիրառվում է գրեթե որպես «Աստծո հետ ճիշտ փոխհարաբերության մեջ լինելու» արտահայտության հոմանիշ: Այստեղ այս տերմինը կիրառվել է որպես մարդու և Աստծո միջև հաստատված ներդաշնակ փոխհարաբերության նկարագրություն, համաձայն այն հիմքի, որ Աստված է մարդուն Իր հանդեպ ճիշտ դիրքի վրա դրել» (Էջ՝ 92):

❖ «**Նրա խաչը**» 2 Օրինաց 21:23-ը հաստատում է, որ ծառից կախված ոչլարքանյուր որ աստվածային անեծքի տակ է (տես՝ Փիլ.2:8): Ի սկզբանե սա վերաբերում էր մահից հետո հանրության առջև մարդուն թաղելու փոխարեն դիակը մաշկազերծելուն: Սակայն, Հիսուսի օրոք ռաբբիները մեկնաբանում էին դա որպես խաչելություն: Հիսուսն Իր վրա վերցրեց մեղավոր մարդկության անեծքը՝ Հին Ուխտի անեծքը (տես՝ Կող. 2:14; Գաղ. 3:13; Փիլ. 2:8):

❖ «**Երկրի վրա լինի, թե երկնքում**» Այս արտահայտությունը ուղղված է «հոգու» (երկնքի) և «մատերիայի» (երկրի, տես՝ Կող. 1:16) միջև է կեղծ հակաթեզիսների դեմ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱԿԻՆԵՐԻ 1:21-23

²¹Եվ ձեզ, որ մի ժամանակ օտարացած էիք և մտքով թշնամի՝ չար գործերի մեջ, հիմա հաշտեցրեց ²²Իր մարդեղեն մարմնի մեջ՝ Իր մահվամբ, որ ձեզ սուրբ, անբիծ և անարատ կանգնեցնի Իր առջև. ²³Եթե մնաք հավատի մեջ հիմնված և հաստատված, առանց հեռանալու ավետարանի հույսից, որ լսեցիք, և որը երկնքի տակ գտնվող ամեն մի արարածի քարոզվեց, որին ես՝ Պողոսս սպասավոր եղա:

1:21 «ձեզ» Սա վերաբերում է հեթանոս հավատացյալներին: Ուշադրություն դարձրեք նրանց հեթանոսական նախկին կյանքը բնութագրող երեք առանձնահատկությունները, որոնք հաջորդում են այս համարին:

❖ «**մի ժամանակ օտարացած էիք**» Սա օտարական կամ անձանոթ բառի հազվադեպ բաղադրյալ վաղակատար կրավորական դերբայն է, որը նկարագրում է հեթանոսների նախկին փոխհարաբերությունն Աստծո հետ: Այս օտարացման աստվածաբանական նկարագրությունը գտնվում է Եփես . 2:1, 3, 11-22-ում: Բարոյախրատական նկարագրությունը Եփես . 4:18-19-ում է: Հնարավոր է, որ այս տերմինը օգտագործվել է ստրուկների համար «մեկ այլ տիրոջ մոտ տեղափոխվելու» իմաստով: Եթե այդպես է, ապա 1:13-ը հանդիսանում է որպես հիմք:

❖ «**մտքով թշնամի**» Մեղավոր մարդկությունն ունի անկախ լինելու մտածելակերպ (տես՝ Հռոմ. 1:28; 8:7; Հակ. 4:4; 1 Հովհ. 2:15-16): Ոչ թե Աստված, այլ մարդկությունն է դառնում ամեն ինչի արժեքը (աթեիստական մարդասիրությունը):

NASB	«գրադված չար գործերով»
NKJV	«ամբարիշտ գործերով»
NRSV	«չար գործեր անելով»
TEV	«չար գործերը, որ դուք արեցիք»
NJB	«ձեր չար վարքը»

Ռաբբիները պնդում են, որ ինչ որ մարդը մտածում է, հենց այն էլ դառնում է: Չար սիրտը, միտքը ի վերջո արտացոլում է իրեն Աստծո և այլ մարդկանց հանդեպ չար գործերով (տես՝ Գաղ. 5:19-21; 2 Տիմ. 3:2-5; Տիտոս 3:3):

1:21 «հիմա հաշտեցրեց ձեզ» «Հաշտեցրեց» բառը գլխավոր բայն է Կող.1:21-23 համարներում: Տե՛ս Կող.1:20-ի գրառումը: Ինչպիսի՛ փոփոխություն տեղի ունեցավ այս մեղավոր, օտարացած հեթանոսների կյանքում Քրիստոսով Աստծո կատարած գործերի շնորհիվ (տես՝ Կող. 1:20):

Ծննդոց 3:15-ում մարդկանց փրկելու Աստծո խոստումը կատարվեց: Խոստումը լիարժեք կերպով իրականացավ Աստծո գործողությամբ: Մեղավոր մարդկությունը ի վիճակի չէր վերադառնալ Արարչին (տես՝ Ես.53:6, մեջբերված 1 Պետ.2:25-ում, և Հռոմ.3:9-18՝ մի շարք ՀԿ-յան մեջբերումների համար): Ինչպիսի սեր է սա, որ հետապնդում է մեղավոր, ապստամբ մարդկությանը ժամանակի ընթացքում և ճիշտ ժամանակին տալիս Իր միակ Որդուն, որ մեռնի մեր փոխարեն:

❖ **«Իր մարդեղեն մարմնի մեջ՝ Իր մահվամբ»** Հնարավոր է սա կապ ունի սուտ վարդապետների կողմից Հիսուսի մարդեղության հերքման հետ (տես՝ Կող.1:20): Հիսուսը կատարյալ Աստված և կատարյալ մարդ էր (տես՝ 1 Հովհ.4:1-6): Նա ուներ ֆիզիկական մարմին (տես՝ Կող.2:11): Նա իրոք մեզնից մեկն էր:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐՄԻՆ (sarx)
SPECIAL TOPIC: FLESH (sarx)

Այս տերմինը հաճախ կիրառվում է Պողոսի կողմից Գաղատացիներում և դրա աստվածաբանական զարգացումները՝ Հռոմեացիներում: Գիտնականները չեն համաձայնվում այս տերմինի տարբեր լրացուցիչ նշանակությունների բնորոշման հարցում: Հաստատ այդ նշանակությունների մեջ գոյություն ունեն որոշակի ընդհանուր եզրեր: Այստեղ միայն փորձում եմ նշել այս տերմինի ընդարձակ իմաստաբանական տիրույթը:

- Ա. Մարդու մարմինը, Հովհ.1:14; Հռոմ.2:28; 1 Կորն.5:5; 7:28; 2 Կորն.4:11; 7:5; 12:7; Գաղ.1:16; 2:16,20; 4:13; Փիլիպ.1:22; Կող.1:22,24; 2:5; 1 Տիմ.3:16
- Բ. Մարդու սերունդը, Հովհ.3:6; Հռոմ.1:3; 4:1; 9:3,5,8; 11:14; 1 Կորթ.10:18; Գաղ.4:23,29
- Գ. Մարդու անձը, Հռոմ.3:20; 7:5; 8:7-8; 1 Կորն.1:29; 2 Կորն.10:3; Գաղ.2:16; 5:24
- Դ. Մարդկայնորեն խոսելը, Հովհ.8:15; 1 Կորն.1:26; 2 Կորն.1:12; 5:16; 10:2; Գաղ.6:12
- Ե. Մարդկային թուլությունը, Հռոմ.6:19; 7:18; 8:5-6,9; 2 Կորն.10:4; Գաղ.3:3; 5:13,16,19-21; Կող.2:18
- Զ. Աստծո հանդեպ մարդկանց թշնամությունը՝ կապված Անկման հետևանքների հետ, Հռոմ.7:14; 13:14; 1 Կորն.3:1,3; Եփես.2:3; Կող.2:18; 1 Պետ.2:11; 1 Հովհ.2:16:

Պետք է ընդգծել, որ «մարմին» տերմինը ՆԿ-ում չի դիտարկվում որպես չարիք, ինչպես հունական մտածելակերպն էր թելադրում: Հույն փիլիսոփաների համար «մարմինը» մարդկային խնդիրների աղբյուր էր. մահն ազատում էր մարդուն այդ ազդեցությունից: Սակայն ՆԿ-ում «մարմինը» հոգևոր բախման պատերազմի դաշտն է (տես՝ Եփես.6:10-18), մինչդեռ չեզոք է: Մարդը կարող է իր ֆիզիկական մարմինը գործածել թե՛ բարիքի և թե՛ չարիքի համար:

❖ **«որ ձեզ կանգնեցնի Իր առջև»** Սա կարող է վերաբերել (1) փրկության օրվան, (2) հավատացյալների մահվան ժամանակին, կամ (3) Դատաստանի Օրվան՝ Երկրորդ Գալստյանը (տես՝ Կող. 1:28; Եփես.5:27):

❖ **«սուրբ, անբիծ և անարատ»** Այս երեք ածականները կիրառված են որպես հոմանիշներ: Սա նկարագրում է Քրիստոսում եղող հավատացյալների մաքրությունը (տես՝ Փիլ.1:15): Նրանք ոչ միայն ներված են, այլ լրիվ փոխված: Սա շատ նման է Եփես.1:4; 4:1; 5:27-ի շեշտադրմանը: Արդարացման նպատակը միայն մեր մեռնելու ժամանակ երկինքը չէ, այլ հիմա մեր սրբությունը (տես՝ Ղևտ.19:2; Մատթ.5:48):

Սրբագործումը որպես պարզև Քրիստոսից՝ ընթացիկ իրողություն է հավատացյալների համար (տես՝ Գործք 26:18; 1 Կորնթ.1:2,30; 6:11; Եբր.10:10,14): Այն նաև Քրիստոսի նմանությամբ ապրելու

կյանքի զարգացում է՝ կատարելագործում (տես՝ Եփես. 1:4; 2:10; 2 Տիմ. 2:12; Հակ. 1:4; 2 Պետ. 3:14) և վախճանաբանական՝ էսկատոլոգիական նպատակ (տես՝ 2 Կորնթ. 11:2; Եփես. 5:27; 1 Թեսաղ. 3:13; 5:23; 1 Հովհ. 3:2): Տե՛ս Հատուկ Թեմա. Մուրը, Եփես. 1:4-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՄԵՂ, ԱՆԱՐԱՏ, ԱՆՍԻՍԿԱԿԱՆ, ԱՌԱՆՑ ՆԱԽԱՏԻՆՔԻ
SPECIAL TOPIC: BLAMELESS, INNOCENT, GUILTLESS, WITHOUT REPROACH

Ա. Բացման սահմանումներ

1. Այս հասկացությունը աստվածաբանորեն նկարագրում է մարդու սկզբնական վիճակը (այսինքն՝ Ծննդոց 1, Եդեմի Պարտեզը):
2. Մեղքը և ապստամբությունը թուլացրեցին կատարյալ փոխհարաբերության այս կարգավիճակը (այսինքն՝ Ծննդոց 3):
3. Մարդկությունը (արու և էգ) փափագում է Աստծո հետ իր փոխահարաբերության վերականգնման, քանի որ նրանք ստեղծվել են Նրա պատկերով ու նմանությամբ այսինքն՝ (այսինքն՝ Ծննդ. 1:26-27):
4. Աստված մեղավոր մարդկության հետ գործ ունեցավ մի քանի կերպերով՝
 - ա. աստվածավախ առաջնորդների միջոցով (այսինքն՝ Աբրահամ, Մովսես, Եսայի)
 - բ. զոհաբերության համակարգի միջոցով (այսինքն՝ Ղևտացիների 1-7)
 - գ. աստվածահաճո օրինակների միջոցով (այսինքն՝ Նոյ, Հոբ)
5. Ի վերջո Աստված ուղարկեց Մեսիային՝
 - ա. որպես Իր իսկ կատարյալ հայտնությունը (տես՝ Հովհ. 1:1-14; Կող. 1:13-17; Եբր. 1:2-3)
 - բ. որպես մեղքի համար կատարյալ զոհ (տես՝ Մարկ. 10:45; 2 Կորնթ. 5:21)
6. Քրիստոնյաները անմեղ են դարձնում՝
 - ա. օրինական ճանապարհով՝ Քրիստոսի փոխանորդական արդարությամբ (տես՝ Հռոմ. 4:3,6,8, 11,22,23,24; Հակ. 2:23)
 - բ. աստիճանաբար Մուրը Հոգու կատարած գործի միջոցով (Հովհ. 16:8-11)
 - գ. Քրիստոնեության նպատակը Քրիստոսակերպությունն է (տես՝ Հռոմ. 8:28-30; 2 Կորնթ. 3:18; Գաղ. 4:19; Եփես. 1:4; 4:13; 1 Թեսաղ. 3:13; 4:3; 5:23; 2 Թեսաղ. 2:13; Տիտ. 2:14; 1 Պետ. 1:15), որը իրականում Ադամի և Եվայի մեջ մարդկության կողմից կորցրած Աստծո պատկերի վերականգնումն է:
7. Երկինքը Եդեմի Պարտեզի կատարյալ փոխհարաբերության վերականգնումն է: Երկինքը Նոր Երուսաղեմն է, որն իջնելու է Աստծո ներկայությունից (տես՝ Հայտն. 21:2) սրբագործված երկիր (տես՝ 2 Պետ. 3:10): Աստվածաշունչը սկսում և ավարտվում է միևնույն թեմաներով:
 - ա. Աստծո հետ մտերմիկ, անձնական փոխհարաբերություն
 - բ. պարտեզի միջավայրում (Ծննդոց 1-2 և Հայտնություն 21-22)
 - գ. մարգարեական խոսքով՝ կենդանիների ներկայությունը և նրանց հետ միասին ապրելը (տես՝ Եսայի 11:6-9)

Բ. Հին Կտակարան

1. Գոյություն ունեն այնքան շատ եբրայերեն բառեր, որոնք կրում են կատարելության, անմեղության, անարատության նշանակությունը, որ դժվար կլինի անվանել և ցույց տալ բոլոր մանրակրկիտ առնչությունները՝ կապերը:
2. Ահա այն հիմնական տերմինները, որոնք կրում են կատարելության, անմեղության կամ անարատության նշանակությունը (համաձայն Ռոբերտ Բ. Գրդլսթունի, Հին Կտակարանի Հոմանիչներ, գրքի, էջ՝ 94-99 /Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*/).
 - ա. *shalom* (BDB1022, KB 1532)
 - բ. *thamam* (BDB1070, KB 1743)

գ. *calah* (BDB478, KB 476)

3. Սեպտուագինտան (այսինքն՝ առաջին դարի եկեղեցու Աստվածաշունչը) եբրայերեն այս հասկացությունները թարգմանում է Կոյնե Հունարեն տերմինների, որոնք կիրառվում են ՆԿ-ում (տես՝ ցածր Գ. կետը)
4. Հիմնական նշանակությունը կապված է զոհաբերության համակարգի հետ
ա. *amōmos* (BDB 1071, տես՝ Ելից 29:1; Ղևտ. 1:3,10; 3:1,6; Թվոց 6:14)
բ. *amiantos* և *aspilus* նաև ունեն հեթանոսական նշանակություն

Գ. Նոր Կտակարան

1. Օրինական հասկացությունը
ա. Եբրայերենում օրինական հեթանոսական իմաստը թարգմանվում է *amōmos* (BDB 1071, տես՝ Եփես. 5:27; Փիլ. 2:15; 1 Պետ. 1:19)
բ. Հունարենում օրինական նշանակությունները (տես՝ 1 Կորնթ. 1:8; Կող. 1:22)
2. Զրիստոսն է անմեղ, անբիծ և անարատը (*amōmos*, տես՝ Եբր. 9:14; 1 Պետ. 1:19)
3. Զրիստոսի հետևորդները պետք է հետամուտ լինեն Նրան (*amōmos*, տես՝ Եփես. 1:4; 5:27; Փիլ. 2:15; Կող. 1:22; 2 Պետ. 3:14; Հուդա 1:24; Հայտն. 14:5)
4. Այս հասկացությունը նաև կիրառվում է եկեղեցու առաջնորդների համար
ա. *anegklētos*, «առանց դատապարտության» (տես՝ 1 Տիմ. 3:10; Տիտոս 1:6-7)
բ. *anepileptos*, «քննադատությունից վեր» կամ «առանց նախատիքի» (տես՝ 1 Տիմ. 3:2; 5:7; 6:14; Տիտոս 2:8)
5. «Անարատ» հասկացությունը (*amiantos*) կիրառվում է
ա. Զրիստոսի համար (տես՝ Եբր. 7:26)
բ. Զրիստոնյայի ժառանգության համար (տես՝ 1 Պետ. 1:4)
6. «Լիարժեքության» կամ «ամբողջականության» հասկացությունը (*holoklēria*) (տես՝ Գործք 3:16; 1 Թեսաղ. 5:23; Հակ. 1:4)
7. «Առանց մեղադրանքի», «անհանցանք անմեղություն» հասկացությունը փոխանցվում է *amemptos* տերմինի միջոցով (տես՝ Ղուկ. 1:6; Փիլ. 2:15; 3:6; 1 թեսաղ. 2:10; 3:13; 5:23)
8. «Մեղադրանքի ենթակա չլինելու» հասկացությունը փոխանցվում է *amōmētos* (տես՝ 2 Պետ. 3:14)
9. «Անբիծ» «անարատ» հասկացությունը հաճախ կիրառվում է այնպիսի հատվածներում, որտեղ կան վերը նշված տերմիններից որևէ մեկը նույնպես (տես՝ 1 Տիմ. 6:14; Հակ. 1:27; 1 Պետ. 1:19; 2 Պետ. 3:14)

Դ. Եբրայերենում և հունարենում կիրառված բառերի քանակը, որոնք փոխանցում են այս հասկացության իմաստը, ցույց է տալիս դրա կարևորությունը: Աստված հոգացել է մեր կարիքը Զրիստոսի միջոցով և այժմ մեզ կոչ է անում Նրա նման լինելու:

Հավատացյալները պաշտոնապես, իրավաբանորեն՝ դատական կարգով, հռչակված են «ճիշտ», «արդար», «անմեղ» Զրիստոսի գործի շնորհիվ: Այժմ հավատացյալները պետք է գրավեն իրենց դիրքը: «Քայլենք լույսի մեջ, ինչպես Նա է լույսի մեջ» (տես՝ 1 Հովհ. 1:7): «Քայլենք մեր կոչմանն արժանի» (տես՝ Եփես. 4:1,17; 5:2,15): Հիսուսը վերականգնել է Աստծո պատկերը մեր մեջ: Մտերմիկ փոխհարաբերությունը այժմ հնարավոր է, սակայն հիշեք, որ Աստված ուզում է այնպիսի մարդիկ, որոնք այս կործանվող աշխարհում (այսինքն՝ ազգերի մեջ) կարտացոլեն Իր բնավորությունը, ինչպես Իր Որդին արեց: Մենք կանչված ենք սրբության (տես՝ Մատթ. 5:20,48; Եփես. 1:4; 1 Պետ. 1:13-16), Աստծո սրբությանը, ոչ միայն օրենքով, այլ նաև էրզիստենցիալ:

1:23 «Եթե մնաք/շարունակեք հավատքի մեջ» Սա առաջին աստիճանի պայմանական նախադասություն է, որը ենթադրվում է ճշգրիտ հեղինակի կողմից կամ նրա գրականական նպատակների համար: Պողոսը ենթադրում էր նրանց հարատևությունը, որը ապացույց էր այն բանի, որ նրանք

իրապես դարձի էին եկել (տես՝ 1 Հովհ. 2:19; Հայտն. 2:7,11,17,26; 3:5,12,21): Տե՛ս Հատուկ Թեմա. Հարատևություն, Փիլ. 1:9-ում:

Հավատքը (սեռական հոլով) վերաբերում է կա՛մ (1) Հիսուսի հանդեպ ունեցած անձնական վստահությանը, կա՛մ (2) Քրիստոսին հավատարմությանը, կա՛մ էլ (3) Քրիստոնեական վարդապետությանը (տես՝ Գործք 6:7; 13:8; 14:22; Գաղ. 1:23; 6:10; Հուդա 1:3,20, նաև Հովվական Թղթերը): Քրիստոնեական հասունությունը բովանդակում է (1) անձնական հավատք, (2) աստվածահաճո ապրելակերպ, և (3) վարդապետական շիտակություն: Կեղծ ուսմունքների վերաբերյալ այս համատեքստում սրանցից յուրաքանչյուրն էլ կարևոր նշանակության է:

❖ **«հիմնված և հաստատված»** Սրանք վաղակատար կրավորական դերբայներ են (միևնույն բայական ձևը, ինչպես «օտարացված» բայն էր Կող. 1:21-ում): «Նրանք եղել են և շարունակում են մնալ հիմնված և հաստատված» (ենթադրվում է Աստծո կողմից): Սա շինարարության հետ կապ ունեցող փոխաբերություն է ամուր՝ հաստատ հիմքին վերաբերող (տես՝ Կող. 2:7; Մատթ. 7:25; Եփ. 3:17): Հնարավոր է, որ դա նաև լինի բառախաղ կապված Կողոսիայի աշխարհագրական սեյսմիկ տեղանքի հետ:

NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«և առանց հեռանալու»
«և հեռացած չեն»
«առանց շեղվելու դրանից»
«և չպետք է թույլ տաք ձեզ ցնցվել դրանից»
«երբեք թույլ չտալով ինքների ձեզ հեռանալու»

Այս տերմինը ՆԿ-ում միայն այստեղ է կիրառվում: Սա նախորդող դրական սահմանման ի հակառակ ժխտական արտահայտություն է: Այն կարող է լինել կրավորական սեռի (Աստված պահում է մեզ, տես՝ NASB, NKJV) կամ չեզոք սեռի (հավատացյալները պետք է վարժվեն ջանասիրության, տես՝ NRSV, TEV, NJB):

❖ **«ավետարանի հույսը»** Պողոսը հաճախ էր օգտագործում այս տերմինը՝ մի քանի, սակայն փոխկապակցված իմաստով: Հաճախ այն ասոցացվում էր հավատացյալի հավատքի վախճանի հետ: Տե՛ս Հատուկ Թեմա. Հույս, Կող. 1:5-ում: Սա կարող է արտահայտվել որպես «փառք», «հավիտենական կյանք», «վերջնական փրկություն», «Երկրորդ Գալուստ», և այլն: Վախճանը հաստատ է, սակայն ժամանակն է անհայտ:

❖ **«որը երկնքի տակ գտնվող ամեն արարածի քարոզվեց»** «Ամեն արարած» խոսքը չափազանցություն է Հռոմեական Կայսրության համար (տես՝ Կող. 1:6):

Սա քերականորեն անդեմ կրավորական դերբայ է: Սակայն սա չի համապատասխանում համատեքստի հետ: Այն պետք է կիրառվեր ներկա ներգործական դերբայի իմաստով: Պետք է հիշել, որ քերականական ձևը ենթարկվող է գրական համատեքստին, ինչպես խոսքերի բառային սահմանումները: Ո՛չ քերականական ձևը, ո՛չ էլ բառի ստուգաբանությունը, այլ համատեքստն է միշտ առաջնայինը:

❖ **«սպասավոր»** Սա «ծառա» կամ «ծառայության» (*diakonos*, տես՝ Կող. 1:7,23,25; 4:7; Եփես. 3:7; 6:21) համար ընդհանուր տերմինն էր: Հիսուսն Ինքը այս տերմինը օգտագործեց Մարկոս 10:45-ում: Սա դարձավ տեղական եկեղեցում ծառայողների՝ սպասավոր սարկավագների տիտղոսը (տես՝ Փիլ. 1:1):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 1:24-2:5

²⁴Այժմ ուրախ եմ ձեզ համար կրած չարչարանքներիս համար և լրացնում եմ իմ մարմնի մեջ Քրիստոսի նեղությունների պակասը Իր մարմնի համար, որը եկեղեցին է. ²⁵որի սպասավորը դարձա ըստ Աստծո տնտեսության, որ ինձ տրվել է, որպեսզի ձեզ համար

Աստծո Խոսքը լրացնեն, ²⁶այսինքն, այն խորհուրդը, որ ծածկված էր հավիտենական դարերից ու սերունդներից, սակայն հիմա հայտնվեց Իր սրբերին. ²⁷որոնց Աստված կամեցավ ցույց տալ, թե ինչ է այս խորհրդի փառավոր ճոխությունը հեթանոսների մեջ, որն է՝ Քրիստոսը ձեր մեջ, փառաց հույսը, ²⁸Ում մենք քարոզում ենք, ամեն մարդու զգուշացնելով և ամեն մարդու սովորեցնելով ամենայն իմաստությամբ, որպեսզի կարողանանք ամեն մեկին կատարյալ ներկայացնել Քրիստոս Հիսուսի մեջ. ²⁹այդ նպատակով ես աշխատում եմ, ջանք թափելով՝ ըստ Նրա ներգործության, որ գործությամբ գործում է իմ մեջ: ^{2:1}Ուզում եմ, որ դուք իմանաք, թե ինչ մեծ դժվարություն եմ կրում ձեզ համար և լավողիկեցիների համար, և բոլոր նրանց համար, ովքեր իմ երեսը առանձնապես չեն տեսել, ²որպեսզի նրանց արտերը մխիթարվեն, սիրով միահյուսված լինելով, հասնեն կատարյալ իմաստության ամբողջ ճոխությանը, Աստծո խորհրդի իմացությանը, և՛ Հոր, և՛ Քրիստոսի, ³Ում մեջ պահված են իմաստության և գիտության բոլոր գանձերը: ⁴Եվ այս ասում եմ, որ չլինի թե մեկը մոլորեցնի ձեզ հրապուրիչ խոսքերով: ⁵Քանի որ, թեև մարմնով հեռու եմ, բայց հոգով ձեզ հետ եմ, և ուրախանում եմ՝ տեսնելով ձեր բարեկարգությունը և Քրիստոսի հանդեպ ձեր հավատի հաստատությունը:

1:24 «ուրախ եմ ձեզ համար կրած չարչարանքներիս համար» Պողոսն իր բանտարկությունը դիտարկում էր որպես եկեղեցու համար օգուտ (տես՝ Փիլ. 2:17 և 2 Կորնթ. 1:5): Պողոսն իր կյանքը դիտարկում էր որպես Աստծուն մատուցած զոհ հանուն եկեղեցու: Սա Բարի Լուրի մի մասն է կազմում, որը մենք չենք սիրում (տես՝ Մատթ. 5:10-12; Հռոմ. 5:3; 8:17; 2 Կորնթ. 4:7-11; 6:3-10; Փիլ. 1:29; 2:17; 2 Տիմ. 3:12; Եբր. 5:8; 1 Պետ. 1:7-8; 4:12-16): Ինչպես որ Հիսուսն ուրիշների համար չարչարվեց, այնպես էլ պետք է Իր հետևորդները չարչարվեն (տես՝ 2 Կորնթ. 5:14-15; Գաղ. 2:20; 1 Հովհ. 3:16): Միայն Սուրբ Հոգին կարող է հալածանքը վերածել ցնծության:

❖ **«իմ մարմնի մեջ»** Տես Հատուկ Թեմա Կող. 1:22-ում:

❖ **«լրացնում եմ Քրիստոսի նեղությունների պակասը»** Այս ակնառու կրկնակի բաղադրյալ բայը (*anti, ana, pleroō*) ՆԿ-ում միայն այստեղ է գտնվում: Սա շատ ծրթին նախադասություն է մեկնաբանելու համար: Այս համարի շուրջ առկա մի քանի տեսությունները հետևյալն են՝

1. Քրիստոսի քավությունը բավարար չէր առանց եկեղեցու, այսինքն՝ Հռոմի Կաթոլիզմի սրբերի արժանիքները:
2. հավատացյալները, ինչպես եկեղեցին, բաժնեկցում են Քրիստոսի չարչարանքները, ոչ փոխանորդաբար, այլ կատարելով Հոր կամքը այս մեղավոր աշխարհում (տես՝ Մատթ. 5:10-12; Մարկ. 10:39; Հովհ. 16:1բ; 2 Կորնթ. 4:10; Գաղ. 2:20; Փիլ. 3:10)
3. Քրիստոսը չարչարվում է հավատացյալների հետ (տես՝ Գործք 9:4-5; 2 Կորնթ. 1:5; Եսայի 63:9)
4. չարչարանքներն անհրաժեշտ են հասունության համար (տես՝ Եբր. 5:8)
5. մենք պետք է վերապրենք «ծննդկանի ցավերը» նոր սերնդի համար (տես՝ Մարկ. 13:8)
6. Պողոսը հերքում էր ինչ-որ գնոստիկ գրավիչ արտահայտություն

«Չարչարանքի» համար այս տերմինը երբեք չի օգտագործվում ՆԿ-ում Քրիստոսի խաչի վրա մահվան համար: Կող. 1:13-18 կոնտեքստը ամբողջությամբ իշում է #1 տարբերակը: Ես ամենաշատը հավանում եմ #5 տարբերակը:

❖ **«եկեղեցին»** *Ekklesia* բառը հունարեն երկու բառերից է առաջացել՝ «դեպի դուրս» և «կանչել»: Այն կիրառվում է Կոյնե Հունարենում նկարագրելու որևէ տեսակի հավաքույթ, ինչպես օրինակ քաղաքային ժողով (տես՝ Գործք 19:32): Եկեղեցին ընտրեց այս տերմինը, քանի որ այն օգտագործվում է Մեպտուազինտայում (Հնգամատյանի հունարեն թարգմանությունը՝ գրված Ք. Ա. մոտ 250թ-ին, Եգիպտոսի Ալեքսանդրիայի գրադարանի համար): Այս տերմինը թարգմանված է եբրայերեն *qahal* տերմինից, որը կիրառվում էր «Իսրայելի ժողովը» արտահայտության մեջ (տես՝ Թվոց 20:4): ՆԿ-ի հեղինակները պնդում էին, որ նրանք են եղել «աստծո կողմից կանչվածները», ովքեր

պետք է որ լինեին իրենց օրոք Աստծո ժողովուրդը: Նրանք ոչ մի արմատական նեղքում չէին տեսնում ՀԿ-յան Աստծո ժողովրդի և իրենց՝ ՆԿ-յան Աստծո ժողովրդի միջև: Հավատացյալները պետք է հաստատեն, որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է համարվում ՀԿ-յան Գրեթի ճշմարիտ՝ իրական ժառանգորդը և ոչ թե արդի ռաբբիական Հուդայականությունը:

Եփեսացիներում, որը շրջանառվող նամակ էր, «եկեղեցի» տերմինը միշտ ունի տիեզերական իմաստ, սակայն Կողոսացիներում այն ունի տեղական նշանակություն: Եկեղեցին թե՛ հավաքական է՝ հանձինս Աստծո ամբողջ ժողովուրդը, և թե՛ անհատական՝ հանձինս հավատացյալների տեղական համայնքը: Այս տեքստում ակնհայտ է, որ Պողոսը նկատի ունի եկեղեցու տիեզերական բնույթը: Տես՝ Հատուկ Թեմա. Եկեղեցի, Կող. 1:18-ում:

1:25 «սպասավորը դարձա» Պողոսը նկատի ունի հեթանոսներին քարոզելու իր Առաքելական կոչումը (տես՝ Գործք 9:15; 22:21; 26:17; Հռոմ. 1:5; 11:13; 15:16; Գաղ. 1:16; 2:7; Եփես. 3:1-2,8; 1 Տիմ. 2:7; 2 Տիմ. 4:17): Սակայն Պողոսն իր կոչումը և պարզվածները դիտարկում էր որպես ծառայի, ստրուկի, սպասավորի» Աստվածաշնչում առաջնորդ լինել նշանակում է լինել ծառա:

❖ **«ըստ Աստծո տնտեսության»** Բոլոր հավատացյալներն էլ ավետարանի սպասավորներ կամ հոգաբարձուներ են (տես՝ 1 Կորնթ. 4:1-5; Եփես. 3:2,9; Տիմոս 1:7; 1 Պետ. 4:10): Պողոսն այս տերմինը օգտագործում է մի քանի տարբեր նշանակությամբ՝

1. որպես Առաքելական հանձնարարություն՝ քարոզելու ավետարանը (տես՝ 1 Կորնթ. 9:17; Եփես. 3:2; Կող. 1:25)
2. որպես փրկության հավիտենական ծրագիր (տես՝ Եփես. 1:10; 3:9; 1 Կորնթ. 4:1)
3. փրկության ծրագրում և դրան զուգորդող ապրելակերպի մեջ մարդկանց խրատելու՝ մարզելու համար (տես՝ 1 Տիմ. 1:4):

NASB	«որպեսզի Աստծո խոսքի քարոզչությունը կարողանամ լիովին հասցնել»
NKJV	«Աստծո խոսքը լրացնեմ»
NRSV	«Աստծո խոսքը լիովին հայտնեմ»
TEV	«լիովին քարոզեմ նրա պատգամները»
NJB	«որպեսզի կատարեմ Աստծո պատգամը»

Սա Կող. 1:24-ում կիրառված միևնույն «ցնել» (*plēroō*) արմատն ունեցող տերմինն է: Պողոսի բանտարկությունը և քարոզչությունը իրականացնում էին Աստծո հեթանոսների համար ունեցած նպատակը (տես՝ Գործք 9:15-16; 22:21; 26:17; Հռոմ. 11:13; 15:16; Գաղ. 1:16; 2:7; Եփես. 3:2,8; 1 Տիմ. 2:7; 2 Տիմ. 4:17):

1:26 «խորհուրդը» Տես՝ Հատուկ Թեմա Եփես. 3:3-ում:

❖ **«որ ծածկված էր հավատենական դարերից և սերունդներից»** Սա վաղակատար կրավորական դերբայ է, այն անցյալում եղել է և շարունակում էր մնալ ծածկված Աստծո կողմից (ենթադրվում է): Այս խորհուրդը ծածուկ էր պահվել (1) հեթանոսներից, (2) հրեաներից, և (3) նույնիսկ հրեշտակներից (տես՝ 1 Պետ. 1:12): Մարգարեները որոշ ակնարկներ ունեցան այդ մասին, սակայն երբեք ամբողջ ճշմարտությունը չիմացան (տես՝ Եբր. 1:1): «Դարեր և սերունդներ» արտահայտությունը կիրառվում էր գնոստիկների կողմից՝ նկատի ունենալով հրեշտակային մակարդակները (*aeons*):

❖ **«սակայն հիմա հայտնվեց Իր սրբերին»** Սա մի բայի անդեմ կրավորական սահմանական է, որը նշանակում է «հստակ հայտնել» կամ «զույսի մեջ բերել» (տես՝ Կող. 1:27; Հռոմ. 3:21; 16:26): Այն ինչ ծածկված էր, այժմ լիովին հայտնված է: Ավետարանը հստակ ու պարզ է բոլորի, և ոչ թե միայն մի քանի ընտրյալների համար: Տես՝ Հատուկ Թեմա. Մուրբեր, Կող. 1:2-ում:

❖ **«փառավոր ճոխությունը»** Պողոսը հաճախ է օգտագործում «ճոխություն» տերմինը, նկարագրելու ավետարանի օգուտները (տես՝ Կող. 1:27, 2:2, Եփես. 1:7,18, 2:7, 3:8,16, Փիլ. 4:19):

❖ «Քրիստոսը ձեր մեջ» Քերականորեն հնարավոր է, որ սա կարող էր թարգմանվել «Քրիստոսը ձեր միջում՝ ձեր հետ», որը այդ դեպքում նկատի կունենար ավետարանի խորհուրդը և ոչ թե Քրիստոսի ներբնակեցմանը: Միևնույն հունարեն նախդիրը՝ *en*, թարգմանվում է «միջումը» դրան նախորդող արտահայտության մեջ՝ «հեթանոսների մեջ»: Սա կարծես թե լավագույնս է համապատասխանում համատեքստին:

Որդու և Սուրբ Հոգու գործի միջև սահուն ներդաշնակություն կա: Ջ. Քեմփրլ Մորգանն ասում էր, որ Սուրբ Հոգու համար լավագույն անունը կարող է լինել «մյուս Հիսուսը»: Հաջորդիվ ներկայացվում է Որդու և Սուրբ Հոգու գործի և տիտղոսների մի ամփոփ համեմատություն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԻՍՈՒՍԸ ԵՎ ՀՈԳԻՆ
SPECIAL TOPIC: JESUS AND THE SPIRIT

Հովհաննես 16:8-14 լուսաբանում է Հիսուս Որդու և Սուրբ Հոգու միջև մտերիմ փոխհարաբերությունը: Այս նոր դարում Հոգու գործն է մեծարել Հիսուսին և վկայել Նրա մասին (տես՝ Հովհ . 16:13-15):

Ա. Հիսուսը խնդրում է Հորը և Նա ուղարկում է Հոգուն

1. Հիսուսը ուղարկում է Հոգին Հովհաննես 14:16, 15:26, 16:7-ում
2. Հայրը ուղարկում է Սուրբ Հոգուն Հովհաննես 14:26-ում
3. թե՛ Հայրը և թե՛ Որդին են ուղարկում՝ Ղուկաս 24:49-ում
4. Հիսուսը բարձրաձայնում է Հոր հետ Իր մեկ լինելու մասին, ուստի Հոգին խոսում է Նրանց երկուսի հետ Իր մեկ լինելու մասին

Բ. «Մեկ ուրիշը միևնույն տեսակից»: Հոգու համար լավագույն անունը «մյուս Հիսուսն» է (Գ .Քեմփրլ Մորգան /G. Campbell Morgan/)

1. երկուսն էլ «ուղարկված» են Հորից
 ա. Որդին՝ Գաղ. 4:4
 բ. Հոգին՝ Գաղ. 4:6
2. երկուսն էլ կոչվում են «ճշմարտություն»
 ա. Որդին՝ Հովհ. 14:6
 բ. Հոգին՝ Հովհ. 14:17, 15:26, 16:13
3. երկուսն էլ կոչվում են «մխիթարիչ» (այսինքն՝ դատապաշտպան)
 ա. Որդին՝ 1 Հովհ. 2:1
 բ. Հոգին՝ Հովհ. 14:16,26, 15:26, 16:7
4. Հոգին կոչվում է Հիսուսի անունով (NASB)
 ա. Գործք 16:7 «Հիսուսի Հոգին»
 բ. Հռոմ. 8:9 «Աստծո Հոգին . . . Քրիստոսի Հոգին»
 գ. 2 Կորնթ. 3:17 «Տերը Հոգի է . . . Տիրոջ Հոգին»
 դ. 2 Կորնթ. 3:18 «Տերը, Հոգին»
 ե. Գաղ. 4:6 «Իր Որդու Հոգին»
 զ. Փիլ. 1:19 «Հիսուս Քրիստոսի Հոգին»
 է. 1 Պետ. 1:11 «Քրիստոսի Հոգին»
5. երկուսն էլ բնակվում են հավատացյալների մեջ (ինչպես և Հայրը)
 ա. Որդին՝ Մատթ. 28:20, Հովհ. 14:20,23, 15:4, 17:23, Հռոմ. 8:10, 2 Կորնթ. 13:5, Գաղ. 2:20, Եփես. 3:17, Կող. 1:27
 բ. Հոգին՝ Հովհ. 14:16-17, Հռոմ. 8:9,11, 1 Կորնթ. 3:16, 6:19, 2 Տիմ. 1:14, 1 Պետ. 1:11
 գ. Հայրը՝ Հովհ. 14:23, 17:23, 2 Կորնթ. 6:16
6. երկուսն էլ նկարագրվում են որպես «սուրբ»
 ա. Հոգին՝ Մատթ. 1:18, Ղուկ. 1:35

բ. Որդին՝ Մարկ . 1:24, Ղուկ . 1:35, 4:34, Գործք 3:14, 4:27,30

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳՈՒ ԱՆՁԸ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳԻՆ ՆԿՈՒՄ

1:27 «այս խորհրդի փառավոր ճոխությունը հեթանոսների մեջ» Պողոսը մի քանի անգամ կիրառել է «ճոխություն» տերմինը նկարագրելու Աստծո գթառատ գործերը և մատակարարումը մեղավոր մարդկության համար (տես՝ Կող . 1:27; 2:2; Հռոմ . 2:4; 9:23; 11:33; 2 Կորնթ . 8:2; Եփես . 1:7,18; 2:7; 3:16):

Աստված միշտ ծրագիր է ունեցել փրկության մեջ միավորելու հրեաներին ու հեթանոսներին (տես՝ Եփես . 2:11-3:13): Փրկության այս ծրագրի մեկնարկները հնարավոր է տեսնել՝

1. Ծննդոց 3:15-ում Աստծո խոստման մեջ, որը նկատի ունի Ադամի բոլոր երեխաներին
2. Աստծո կողմից Աբրահամի կանչի մեջ, որը օրհնություն էր լինելու բոլոր ժողովուրդների համար (տես՝ Ծննդ . 12:3)
3. Աստծո կողմից քահանայական թագավորություն բարձրացնելու՝ կանչի մեջ, որպեսզի ձեռք մեկնեն աշխարհին տես՝ Ելից 19:5)
4. նույնիսկ Սողոմոնի տաճարն ունեւ հեթանոսներին հատկացված վայր, որպեսզի նրանք ապաշխարեն ու հավատան մաս կազմելով նրանց հետ (տես՝ 3 Թագ . 8:43,60)
5. մարգարեներում բազմաթիվ հատվածներ (հուկա՝ Եսայի գրքում), որոնք վերաբերում են Աստծո տիեզերական տիրակալությանը և ամբողջ մարդկությանը ուղղված հրավերին:

❖ **«փառաց հույսը»** Մա վերաբերում է Հարության Օրվան, երբ սուրբերը կատանան իրենց նոր փառավորված մարմինները (տես՝ 1 Հովի . 3:2): Ընտրության, արդարացման և սրբացման արդյունքը կլինի փառավորումը (տես՝ Հռոմ . 8:29-30): «Փառք» թեմայի շուրջ տե՛ս ավելի ամբողջական գրառում Եփես . 1:6-ում:

1:28 «Ում մենք քարոզում ենք» Քրիստոնեությունը առաջին հերթին ճիշտ վարդապետություն, բարոյական չափանիշներ կամ կրոնական ծեսեր չի, այլ Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն: Հենց որ սա հաստատվում է, մնացյալ կետերը գտնում են իրենց պատշաճ տեղը (տես՝ 2 Տիմ . 3:15,16-17):

❖ **«զգուշացնելով»** Այս բառը կիրառվում է «երեխա խրատելիս» Սեպտուագինտայում (տես՝ Հոր 5:17): ՆԿ-ում այն կիրառվում է հավատացյալները մեկը մյուսին հորդորելու առումով (տես՝ Գործք 20:31, Հռոմ . 15:14): Հաճախ այն կրում էր Քրիստոնեական անպատշաճ վարքի դեմ զգուշացման բացասական իմաստ (տես՝ 1 Թեսաղ . 5:14; 2 Թեսաղ . 3:15):

❖ **«ամեն մարդու»** Այս արտահայտությունը տվյալ համարում այն ընդգծելու համար օգտագործվում է երեք անգամ: Այս բովանդակալիությունը շատ տարբեր է կեղծ վարդապետների բացառիկությունից Այս Ավետարանը ամբողջ մարդկության համար է (տես՝ Հովի . 3:16; 1 Տիմ . 2:4; 2 Պետ . 3:9):

❖ **«ամենայն իմաստությամբ»** Աստծո իմաստությունը չափազանց տարբեր է կեղծ վարդապետների այսպես կոչված գիտության բացառիկությունից և գաղտնիությունից:

❖ **«որպեսզի կարողանանք ամեն մեկին ներկայացնել»** Եկեղեցու համար Աստծո նպատակն այն է, որ յուրաքանչյուր հավատացյալ Քրիստոսի մեջ հասուն լինի (տես՝ Կող . 4:12; Եփես . 4:13; 1 Կորնթ . 2:6; 14:20; Փիլ . 3:15): Քրիստոսի մեջ չկան, հատուկ խմբեր, կարգեր, պարզևներ, գիտություն կամ առանձնաշնորհումներ, այլ միայն ծառաներ:

NASB
NKJV, NJB
NRSV, TEV

«լիակատար»
«կատարյալ»
«հասուն»

Սա հունարեն *telos* (նաև մեծ տարածում ունի երկրորդ դարի գնոստիկ գրականության մեջ) տերմինն է, որը նշանակում էր «հանձնարարված առաջադրանքի համար լիարժեք պատրաստված» (տես՝ Եփես. 4:12): Այն կիրառվում էր՝

1. կոտրված վերջույթների համար, որոնք բուժվում էին և նորից դառնում օգտագործելի
2. ձկնորսական ցանցերի համար, որոնք նորոգվում էին և հետևաբար հնարավոր էր լինում դրանցով ձուկ բռնել
3. նավերի համար, որոնք հարմարեցվում էին պարաններով և դուրս գալիս ծով նավարկության
4. հավերի համար, որոնք բավականին խոշորացել էին խանութ տարվելու համար: Այն չի ենթադրում անմեղսունակություն, այլ գործնական հասունություն

1:29 «աշխատում եմ, ջանք թափելով» Այս նույն հունարեն ուժեղ տերմինները միասին կիրառվում են 1 Տիմ. 4:10-ում՝ նկարագրելու Պողոսի ծառայությունը:

❖ **«պայքարելով»** Սա ներկա ժամանակի գործիական հոլովի դերբայ է: Սա կա՛մ մարզական տերմին է (տես՝ 1 Կորնթ. 9:25; 1 Տիմ. 6:12; 2 Տիմ. 4:7) կա՛մ էլ ռազմական տերմին (տես՝ Կող. 2:1; Հովի. 18:36): Այս հունարեն արմատից է ծագել անգլերենի “agony” բառը, որը նշանակում է «տառապանք»: Եկեղեցու գործը հեշտ չէ:

❖ **«ըստ Նրա ներգործության, որ գործությամբ գործում է իմ մեջ»** Սա ներկա ժամանակի ապակատար դերբայ է: Աստծո գործությունն է և ոչ թե հավատացյալի, որ «լիցքավորում է» բոլոր ծառայությունները (տես՝ 1 Կորնթ. 2; Եփես. 1:19; 3:7, 20; Փիլ. 3:21; 1 Տիմ. 1:12): Այս գոյականը և դերբայը սկիզբ են առել միևնույն հունարեն արմատից, որը նշանակում է «Նրա էներգիան լիցքավորում է ինձ»:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է Պողոսն այս նամակներում օգտագործում ստանդարտ ներածականներ: Ինչո՞վ է տարբերվում այս բացման խոսքը:
2. Ո՞վ էր սկսել այս եկեղեցին: Ո՞րն էր Պողոսի կողմից այս նամակը գրելու պատճառը:
3. Թվարկե՛ք այն պատճառները, որ ունեւր Պողոսը, այս սուրբերի համար գոհանալու:
4. Թվարկե՛ք Աստծո կամքի երեք առանձնահատկությունները (1:9):
5. Թվարկե՛ք այն չորս տարրերը, որ Պողոսն իր աղոթքում կապում է «արժանի կյանքեր» ապրելուն (1:10-12):
6. Թվարկե՛ք, թե ինչ է ասում Պողոսը Հիսուսի վերաբերյալ (1:15-19; 2:9-10):
7. Ինչո՞ւ է Պողոսն այդքան ցայտուն կերպով շեշտադրում Հիսուսի մահը:
8. Կարո՞ղ է արդյոք մարդն ընկնել շնորհքից (1:23; 2:16-23):
9. Ի՞նչ իմաստ ունի 1:24 համարը:
10. Սահմանե՛ք «խորհորդ» բառը: